# Ազգ

AZG armenian newspaper

Մայիս 23
1992
Շաբաթ

Եռօրեայ թերթ
տարի. քիւ 39 (131)
գինը 95 կ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիլ 69149

Հեռ. 581841, Ֆաքս 562941, տելեքս 243266 SULASU


ՀԱՅԿ-Ազգ.ՍՍՀ

## Բեյրութը Լիսաբոնում կհանդիպի Հայաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի արտգործնախարարներին

Ինչպես հաղորդեց ԻՏԱՐ-ՏԱՍՍ գործակալությունը, երեկ ԱՄՆ-ի պետդեպարտամենտի ներկայացուցիչ Փաուերը հայտարարել է. «ԱՄՆ կառավարությունը ոգեշնչված է Հայաստանի նախագահ Տեր-Պետրոսյանի առաջարկով՝ Նախիջեւանի հանրապետության հետ համագործակցության պայմանագիր կնքել եւ նրանց միջեւ սահմանը վերածել անվտանգության եւ կայունության գոտու: Մենք անհամբեր սպասում ենք այդ հարցի մասին ավելի մանրամասն լրատվության: Երեւանի մեր դեսպանատունը նրանց հետ շփումների մեջ է, իսկ պետքարտուղար Բեյքերը Լիսաբոնում առանձին հանդիպումներ կունենա Հայաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի արտգործնախարարների հետ»:

■

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## Սահման բաջաց... խելք իւրեանց

Հայկական զէնքի վերջին յաղթանակներն Արցախում եւ «ճոճ հուրջը» արցախահայկական պետք էին ապրելու համար, հայաստանցի հային՝ իրմնպահպանման, իսկ սփիւռքահային՝ ազգային արժանապատուութեան համար: Վերջին չորս տարիների տաժանչարները, յուսախաբութիւնները, ընկրկումներն ու փոթորկումները մեզ ազգովին դրել էին ծիծաղելի մի նոյն հունի մէջ, որ մեր բաժինն էր, եղել վերջին վեց դարերին՝ անզօր վրէժխնդրի, դառնացած ապագայապաշտի վիճակ: Այնինչ, որ նոյնիսկ ազգային մեր նոր պետութեան գոյատեւումը անխոցոտ հոծուածք չէր մեր հոգիներում:

Անխոցոտ չէ նաեւ մեր յաղթական հակահարուածի բերկրանքն այսօր: Մենք բոլորս, բայց մանաւանդ մեր ժողովուրդն իր բնազդով, մտահոգ ենք աւելի, քան երբեք: Կը կարողանա՞նք պահել վերագտածը:

Ոչ թէ տկարի հոգեբանութիւնը, այլ մեզ շրջապատող իրական պայմաններն են թելադրում այդ մտահոգութիւնը: Քայքայուած տնտեսութեամբ մի երկիր, որ գուցէ թէ սպիտակած լինի ընդերկար կռուի պատրաստ լինել, զոհել եւ ինքնագոհուել իր լինելիութեան համար: Անիշխանութեան ցաւից բռնուած զոյգ հարեւաններ, որոնցից մէկը մեզ հետ բարեկամութիւն անելու ուժ չունի, իսկ միւսը՝ միտ: Մի փլուզուած, բայց դեռհզօր կայսրութիւն, որի շահերն այնքան բազմազան են, որ նախընտրութիւնները որեւէ պահի կարող են դարձեալ յետուառաջ ընկնել: Մի ոխերիմ հարեւան, որի բկին ցցուած փուշ ենք նորէն: Նորը վերագտած մի հին բարեկամ, որին ազատ չենք թողնելու մեր կողքին լինել:

Մեր միակ յուսալին մենք ենք միայն, մեր հաւաքական կամքը՝ մեր նորահաստատ պետականութիւնը, որ մարմնաւորում է մեր ամէն ինչը՝ թէ՛ տկարութիւնները, թէ՛ ինքնապահպանութեան բնազդը, թէ՛ լինելիութեան ձգտումները: Մեծ փորձութիւնների պատճառ է դարձել: Եւ ղեկի մօտ կանգնածները գիտակից են դրան: Ճիշտ են կատարում քայլերը, որոնք աւելի ինքնավստահ, հատու եւ ճշգրիտ կը լինեն, եթէ զգանք մեր բոլորի նեցուկը, մեր պահանջկոտ ու խոպաներ հունչը, եթէ զգանք պատասխանատուութիւնների փոխադարձ կապը:

Արցախից մինչեւ Երասխաւան, Տաւուշից մինչեւ Գորիս ու Մեղրի մեր ինքնապահպաններից, նրանց շարժող ուժերից, մեր բոլորից այսօր ամէն բանից աւելի պահանջւում է խոհեմութիւն, որի ապացոյցները տալիս ենք, եւ խելք, որ սովորաբար մեզ մօտ միշտ վերջում է գալիս... Խիզախութիւնը արդիւնք է տալիս միայն այն ժամանակ, երբ զգօնութիւնն է ղեկավարում այն: Եւ իսկական խոհը նա է, որը գիտի գործելու եւ կանգ առնելու ժամանակը, ի հարկին դարձեալ կարենալ գործելու համար:

■

# Աշխարհի քաղաքական ոլորտներում տենդագին ընթանում է հայ-ադրբեջանական կոնֆլիկտը

### Ռաֆայելին Լեռնային Ղարաբաղի խնդիրը համարում է ծայրահեղ

ԵԱՀԽ-ի Լեռնային Ղարաբաղի գծով հանձնաժողովի նախագահ Մարիո Ռաֆայելլին իտալական «Ավանտի» թերթին տված հարցազրույցում հայտարարել է, որ «Լեռնային Ղարաբաղի խնդիրը ծայրահեղ բարդ է եւ այժմ գլխավորը հակամարտության առման կանխումն է»:

«Եթե մեզ չհաջողվի բռնացնել կոնֆլիկտը, *ասել է նաև*, արդ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կարող են տեղի ունենալ բախումներ, որից հետո պատերազմի մեջ կներքաշվեն նաեւ Թուրքիան եւ Իրանը: Այդ պայմաններում Ռուսաստանը, իհարկե, չի կարող մի կողմ կանգնել, եւ այդպես կսկսվի շղթայական ռեակցիա:

Թուրքիայում եւ Իրանում ուշադիր հետեւում են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերություններում դեմերի զարգացմանը: Անհրաժեշտ է համատեղ ջանքեր գործադրել, որպեսզի կանխենք կոնֆլիկտի աստիճանական ծավալումը. կողմերի միջեւ հաստատենք նվազագույն վստահություն, եւ սկսենք խորհրդաժողովը, որը կգբաղվի այդ բարդ խնդրի կարգավորմամբ:

Դրությունն առայժմ ոչ մի լավ բան չի խոստանում: Կուտակվել է տասնյակ տարիների ատելություն, բայց դրա կարգավորման առարկայական պայմաններ կան: Դրա համար ժամանակ է պետք, սակայն դա հնարավոր է անել»:

### Խորհր թերթերը նշում են հայկական գործոնը

Արձագանքելով վերջերս Հայաստանի հասցեին Թուրքիայում հնչած սպառնալիքներին, Ռուսաստանը որոշեց ցուցադրել իր աջակցությունը այդ հանրապետությանը. գրում է *«Խայեներըլ բայմզ»*-ը: Իր պատվիրակությունը ուղարկելով Հայաստան, Ռուսաստանը Թուրքիային եւ Ադրբեջանին պարզորոշ հասկացնում է, որ «Հայաստանը մրցնում է իր հանիի ոլորտը»:

Պաշտպանության նախարար Պավել Գրաչովին Հայաստան ուղարկելով, նշում է *«Գարդիան»*-ը, Ռուսաստանը փաստորեն նախազգուշացրել է Թուրքիային, Ղարաբաղյան կոնֆլիկտին միջամտելու կատակցությամբ: Այցը սկսվել է Շաոլոշնիկովի հեռուստաելույթից մի քանի ժամ անց, երբ վերջինս հայտարարել էր, թե Թուրքիայի միջամտության դեպքում կսկսվի երրորդ համաշխարհային պատերազմ:

Ինչպես գրում է *«Նյու Յորք Թայմզ»*-ը, ԱՄՆ-ը գտնվում է չափազանց «նուրբ» իրավիճակում: Մի կողմից մեծ ազդեցություն ունեն ԱՄՆ-ում բնակվող հայերը, մյուս կողմից ԱՄՆ-ը մտադիր է Թուրքիան դարձնել Միջին-Ասիայում Իրանին եւ Ռուսաստանին հակակշիռ կողմ: Այդ իսկ պատճառով պետդեպարտամենտի ներկայացուցիչը ստիպված է հավասարակշռել իր հայտարարությունները այդ երկու խնդիրների միջեւ:



Վենդրելը փախստականների վարչությունում

### Դեմիրելը մտադիր է դիմել Ելցինին

Ինչպես հայտնի դարձավ Ռուսաստանի արտգործնախարարության իրազեկ աղբյուրներից եւ թուրքական *«Ջումհուրիյեթ»* թերթից, Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը երկօրյա պաշտոնական այցով կժամանի Ռուսաստան, որի ընթացքում նախատեսվում է Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունների հիմունքների մասին պայմանագիր ստորագրել: Ռուսաստանի արտաքին գաղափարական գերատեսչության ափսեակցի խոսքերով, պայմանագիրը կհամապատասխանի այժմյան գաղափարական իրականության ոգուն, կհաստատի ռուս-թուրքական հարաբերությունների նոր որակ: Ըստ պայմանագրի, *«հետայսու Ռուսաստանը եւ Թուրքիան ծանուցում են միմյանց որեւէ բարեկամական պետություններ»*: Բանակցությունների ժամանակ կքննարկվեն միջազգային եւ շրջանային խնդիրները, առաջին հերթին Լեռնային Ղարաբաղում եւ ընդհանուր առմամբ Անդրկովկասում ստեղծված իրավիճակը:

Սուլեյման Դեմիրելը մտադիր է Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինին կոչ անել, որպեսզի վերջինս օգտագործի իր ազդեցությունը Լեռնային Ղարաբաղում հայկական հարձակումները կանխելու համար:

Թուրքիայի վարչապետի այցի ընթացքում կանցկացվեն նաեւ առեւտրական համագործակցության քննադատին նվիրված բանակցություններ:

Ըստ UPI գործակալության, Մոսկվա կատարելիք այցից առաջ, անդրադառնալով Շաոլոշնիկովի հայտարարությանը, Դեմիրելը հայտարարել է. *«Ամեն մեկը կարող է ասել այն, ինչ ցանկանում է»*: ■

## Երեւան ժամանեց ՄԱԿ-ի պատվիրակությունը

Մի քանի օրվա ուշացումից հետո, մայիսի 21-ի երեկոյան վերջապես Երեւան ժամանեց ՄԱԿ-ի պատվիրակությունը՝ փաստահավաք առաքելությամբ: Խումբը, որ ղեկավարում էր ՄԱԿ-ի հաղթական դեպարտամենտի տնօրեն Ֆրանչեսկ Վենդրելը, հանդիպեց Հայաստանի ղեկավարների հետ, ծանոթացավ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի իրավիճակին, որոնց ներկայացվեց Նախիջեւանի վերջին իրադարձությունների ճշմարիտ պատկերը: Ըստ մեզ հասած տեղեկությունների, ՄԱԿ-ի պատվիրակությունը ինչ-ինչ պատճառներով չայցելեց նախապես ծրագրված սահմանամերձ Երասխավան, փոխարենը պատրաստվում են մեկնել Քարու եւ Լեռնային Ղարաբաղ:■

## Ռուսաստանը չի կարող 7-րդ բանակը պահել Հայաստանում

Ռուսաստանը հնարավորություն չունի բավարարել Հայաստանի խնդրանքը եւ այդ հանրապետության տարածքում թողնել 7-րդ բանակը, որը մտնում է Ռուսաստանի զինված ուժերի կազմի մեջ: Այդ մասին երեկ Մոսկվայում կայացած մամուլի ասուլիսում հաղորդեց Ռուսաստանի պաշտպանության նախարար բանակի գեներալ Պավել Գրաչովը: Նա տեղեկացրեց, որ մայիսի 21-ին Երեւանում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ նա եւ Ռուսաստանի պետքարտուղար Գենադի Բուրբուլիսը Հայաստանի ղեկավարության հետ պայմանավորվել են 7-րդ բանակը դուրս բերել ըստ փուլերի: Այդ հանրապետությունում տեղակայված առաջին մոտոհրաձգային դիվիզիայի դուրս հանումը կսկսվի հուլիսի 1-ից, ասաց Պավել Գրաչովը: Սակայն դա վերաբերում է միայն անձնակազմին: Հաշվի առնելով, որ Հայաստանը ստորագրել է կոլեկտիվ անվտանգության մասին պայմանագիրը, 7-րդ բանակի հիման վրա կստեղծվեն հանրապետության զինված ուժերը, նշեց նախարարը:

Պատասխանելով այն հարցին, թե պատրա՞ստ է Ռուսաստանը, ելնելով վերոհիշյալ պայմանագրի դրույթներից, Հայաստանի հետ միասին մարտական գործողություններ վարել Թուրքիայի դեմ, հայ-ադրբեջանական կոնֆլիկտին վերջինիս միջամտելու դեպքում, Պավել Գրաչովն ասաց, թե՝ իր տվյալներով, *«Թուրքիան մտադիր չէ պատերազմել ոչ մեկի հետ»*:

Բանակը Հայաստանից դուրս հանելու մասին որոշումը նա պարզաբանեց, մասնավորապես, անձնակազմի համալրման դժվարություններով, ներկայումս «տաք կետերում» ծառայել ցանկացողները շատ քիչ են:

■

## Սահմաններում հարաբերական հանգիստ է

Սահմանամերձ շրջանների իրավիճակը պարզելու նպատակով երեկ երեկոյան հեռախոսով կապվեցինք Կապանի, Գորիսի, Տաւուշի եւ Արարատի շրջանների հետ: Մեզ հայտնեցին, որ անցած երկու օրերին սահմաններում տիրում է հարաբերական անդորր եւ հակառակորդի կողմից միայն հատուկենտ ավտոմատային կրակահերթեր են լսվում: Իրավիճակը փոքր-ինչ լարված է միայն Տաւուշի շրջանում, բայց նույնիսկ այստեղ անցած օրերի համեմատ իրադրությունը կարելի է գնահատել որպես համեմատաբար հանգիստ: Իջեւանի շրջանի սահմանամերձ գոտու ամբողջ երկայնով լսվում են հատուկենտ կրակոցներ:

Արարատի շրջանի իրազեկ աղբյուրները հերքեցին CNN հեռուստաընկերության ըստ ադրբեջանական աղբյուրների հաղորդած այն լուրը, թե իբր հայկական ուժերը վերահսկում են Նախիջեւանի եւ Թուրքիայի միջեւ ձգվող սահմանային հատվածը: Մեզ հայտնեցին նաեւ, որ շրջանի ինքնապաշտպանական ուժերը վերահսկում են միայն Հայաստանի եւ Նախիջեւանի սահմանամերձ գոտում գտնվող եւ ոչ մեկին չպատկանող բարձունքները:

Կապանի շրջանում մայիսի 20-ի զննդակոծություններից եւ հրետակոծություններից հետո լուրջ միջադեպեր չեն արձանագրվել: ■

## Ռուսաստանի խորհրդարանը Կիեւին կոչ է անում

Ռուսաստանի խորհրդարանը կոչ է արել Ուկրաինայի նախագահին եւ Գերագույն խորհրդին *«զերծ մնալ որեւէ գործողություններից, որոնք ուղղված կլինեն Ղրիմի բնակչության ազատ կամքի արտահայտման դեմ, որը համապատասխան միջազգային իրավական նորմերի, իրավունք ունի ինքնուրույն որոշել իր ճակատագիրը»*: Երեկ Ռուսաստանի խորհրդարանի կողմից ընդունված հայտարարության մեջ նշվում է նաեւ, որ հնարկելով Ղրիմի կարգավիճակի հարցը, Ռուսաստանի Գերագույն խորհուրդը *«ոչ մի դեպքում նպատակ չունի որեւէ պահանջ ներկայացնել Ուկրաինային»*: ■

## Թուրք քաղաքական մեկնաբանը ինքնադատում է ազերիներին

«Հյուրրիյեթ»-ի գլխավոր խմբագիր Էրթուղրուլ Օզքոքը մայիսի 14-ի համարում «Պոլիտիկա» անունով հատուկ անկյունում գրում է. «...Ազերիները Թեհրանի տնտակցությունների մասին անգամ չեն ակնարկում, իսկ երբ հայերը առիթից օգտվելով հարձակվեցին Շուշիի վրա եւ գրավեցին այն, միայն այդ ժամանակ ազերիները հեռախոսով դիմեցին մեզ ու օգնություն խնդրեցին:

Նման իրավիճակներում, երբ Բաքվի ղեկավարները, անտեսելով Թուրքիան, շրջանում ազդեցություն ունենալու հնարավորություն են տալիս Իրանին, Անկարան շատ է մտահոգվում, ինչը բնական է»: ■

digitised by A.R.A.R.@

## Իրանի դեսպանատան սոհիդականը այցելեց ՀՌԱԿ-ի գրասենյակը

Հինգշաբթի, մայիսի 21-ին, ժամը 5-ին ՀՌԱԿ-ի կենտրոնական գրասենյակ այցելեց Հայաստանում Իրանի իսլամական Հանրապետության դեսպանատան դիվանագետ Մոհամադ Ջարհադ Քոլեյնին: Իրանի դեսպանատան հաղորդակցության խորհրդականին նդունեցին ՀՌԱԿ Հանրապետական արչության ատենապետ Ռուբեն Իրզախանյանը, ՀՌԱԿ պատգամավորական խմբակցության անդամ -ոբերտ Մնացականյանն ու ՀՌԱԿ անրապետական վարչության ներայացուցիչներ:

Ավելի քան երկու ժամ տեւած ոսույցի ընթացքում ըոնափվեցին Արախի հիմնահարցի, հայ-իրանական արաբերությունների, Իրանի խաղաարար միջնորդության ոնչվող արցեր: Պատասխանելով Մոհամադ ›արհադ Քոլեյնիի հարցերին, ՌԱԿ Հանրապետական վարչույան ատենապետ Ռուբեն Միրզախայանը ներկայացրեց կուսակցության ւնցած ուղին, նրա վերահաստատուը Հայաստանում, հանրապետության երին քե արտաքին հաղաքականույան խնդիրներում կուսակցության իրմորոումները:

Մեկ անգամ եւս բարձր գնահաելով Իրանի Իսլամական Հանրապեյության միջնորդական առաքելույունք, հայ եւ իրանցի ժողովուրդների ‘բարեկամությունը, ՀՌԱԿ ներայացուցիչները ընդգծեցին, որ երջում խաղաղության եւ կայունույան հաստատման ուղղությամբ որե միջնորդություն պարտավոր է ասվի առնել Արցախի ժողովրդի ամեն ու արդար իրավունքները:

Իրանի Իսլամական Հանրապեության դեսպանատան խորհրդակը տարակուսանք հայտնեց այն քաի առթիվ, որ նախագահ Լեւոն եր-Պետրոսյանն իր վերջին հայտարությունում չի նշել Իրանի միջորդական առաքելությունը հակաարտության կարգավորման ուղղույամբ: ՀՌԱԿ ներկայացուցիչները ›ատասխանեցին, որ նախագահի հայտարությունը բացառապես վերաբերում էր Նախիջեւանի դեպքերին, որ Իրանը օգտագործում է իր հնարավոր նպատակների համար: ՀՌԱԿ ներկայացուցիչները հիշեցրին, որ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը պատմիցս շեշտել է Իրանի միջնորդության չեզոք եւ անկեղծ լինելը, նաեւ այն կարծիքը արտահայտեցին, ›ե Իրանը, հակառակ որոշ ուժերի ողմից նրա իսլամական արմատականության օրինակ լինելու հանգամանքը շեշտելուն, իր միջնորդությամբ աղացուցում է, որ չի ընդունում հակամարտության կրոնական ›նույթը, որը եւ բարձրացնում է նրա միջազգային վարկը:

Հանդիպման վերջում պայմանավորվածություն ձեռք բերվեց կուսակցության եւ դեսպանատան միջեւ լրագրերի ամրագնդման եւ պարբերական հանդիպումների անցկացման առնչությամբ: ■

# Բուրբուլիսը բացառեց Թուրքիայի զինված միջամտությունը

### *Ռուսական զորքերը դուրս կբերվեն Հայաստանից, բայց...*

Մայիսի 15-ին Տաշքենդում կոլեկտիվ անվտանգության պայմանագրի ստորագրումից ընդամենը 5 որ հետո՝ մայիսի 21-ին աշխատանքային այցով Հայաստան ժամանեց Ռուսաստանյան Ֆեդերացիայի պատվիրակությունը Ռուսաստանի պետքարտուղար Գենադի Բուրբուլիսի գլխավորությամբ: Պետքարտուղարին ուղեկցում էին Ռուսաստանի պաշտպանության նախարար, բանակի գեներալ Պավել Գրաչովը, արտգործնախարարի առաջին տեղակալ Ֆյոդոր Շելով-Կովեդյաեւը, ԱՊՀ-ի հետ նշտեսական կապերի գծով պետական նախարար Վլադիմիր Մաշիցը, Հայաստանում Ռուսաստանի դեսպան Ստուդիխինը, պատգամավորներ, դիվանագետներ:

Բանակցությունները, որոնց հայկական կողմից մասնակցեցին Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, փոխնախագահ, վարչապետ Գագիկ Հարությունյանը, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, արտգործնախարարի առաջին տեղակալ Արման Կիրակոսյանը եւ այլ պաշտոնական անձինք, անցան կառավարական հյուրասան փակ դռների հետեւում:

Բնական է, որ հատկապես երջանում նոր աշխարհաքաղաքական տեղաշարժերի եւ հարեւան Թուրքիայի անհանգիստ կեցվածքի պայմաններում մեզ մոտ կարեւորվում էր անգամ այս աշխատանքային հանդիպման նշանակությունն ու արդյունքները: Համենայն դեպս, Երեւան ժամանելու առաջին իսկ րոպեներին Ռուսաստանի պետքարտուղարը լավատեսորեն էր տրամադրված. *«Մենք այս հերթական աշխատանքային հանդիպումը անցկացնում ենք Հայաստան-Ռուսաստան պայմանագրի երջանակներում, որը ենթադրում է ոչ միայն հետագա համագործակցության հնարավորությունները, այլեւ մի շարք ընթացիկ հարցերի ննարկում»*: Պետքարտուղարը նշեց նաեւ, որ առայժմ որեւէ ռազմական պայմանագիր չի կնքվի, փոխարենը մեծ տեղ կտրվի Տաշքենդում ստորագրված կոլեկտիվ անվտանգության պայմանագրին, դրա հետ մնկտեղ կկարեւորվի երկու երկրների փոխհամագործակցությամբ երջանում կայուն անվտանգության երաշխիքների ապահովման հարցը, ինչպես նաեւ ննարկման խնդիր կդառնան Հայաստանում եւ Ռուսաստանում տարվող նշտեսական բարեփոխությունները:

Բանակցությունները տեւեցին մոտ հինգ ժամ եւ անցան չորս ուղղություններով՝ բաղաքական, նշտեսական, գիտամշակութային եւ ռազմական:

Ամփոփելով հանդիպման արդյունքները, Գենադի Բուրբուլիսը, որը հանդիպումից հետո հրաժարվեց պատասխանել լրագրողների հարցերին, Թուրքիայի կողմից որեւէ զինված միջամտությունը ոչ միայն ժխտեց, այլեւ կտրուկ ասաց. *«Դա բացառվում է»*: Իսկ Ռուսաստանի պատվիրակության անդամ, Անդրկովկասյան գինվորական օկրուգի հրամանատար, գեներալ-գնդապետ Վալերի Պատրիկեեւը պատասխանելով մեր այն հարցին, թե ինչպե՞ս է գնահատում ներկա հանդիպումն, պատաս. *«Ռազմական ասպարեզում ձեռք բերված համաձայնությունները բավարարում են երկու կողմին եւ կծառայեն Հայաստանի ու Ռուսաստանի շահերին»*: Այն հարցին, թե Թուրքիայի հարձակման դեպքում Ռուսաստանը կաջակցի՞ Հայաստանին, Պատրիկեեւը պատասխանեց. *«Ռուսաստանը պետք է իր զինված ուժերն այնպիսի մարտական պատրաստվածության հասցնի, որ կարողանա այս երջանում պաշտպանել եւ Ռուսաստանի հարեւան երջանների շահերը, եւ, իհարկե, Հայաստանի շահերը»*:

Նույն կերպ արտահայտվեց նաեւ Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովը, որը մեր զրույցի ընթացքում ասաց, թե Թուրքիայի կողմից որեւէ զգալի վտանգ չի տեսնում: Իսկ մեր այն հարցին, թե ինչպե՞ս է նա տեսնում Հայաստանից եւ Ադրբեջանից զորքերը դուրս բերելու մասին իր հայտարության եւ կոլեկտիվ անվտանգության պայմանագրի իրականացումը, ասաց. *«Այո, իսկապես, ես հայտարել եմ, որ Հայաստանից ու Ադրբեջանից զորքերը դուրս կբերվեն: Բայց դա չի հակասում կոլեկտիվ անվտանգության պայմանագրին, որը ենթադրում է այն ստորագրած վեց երկրների պաշտպանական միությունը: Իսկ պաշտպանությունը կկազմակերպենք կոլեկտիվ հիմունքներով: Հայաստանում գտնվող ռուսական զորքերը կկրճատվեն եւ աստիճանաբար դուրս կբերվեն: Դրա ժամկետները կորոշվեն մեր մյուս հանդիպումների ընթացքում: Դա կլինի այն ժամանակ, երբ հայկական կողմը մեզ ներկայացնի արդեն ննարկված համաձայնագրի վերջնական օրինակները»*:

Մյուս կողմից, մեկնաբանելով հանդիպումն ու ներկայացված փաստաթղթերը, Հայաստանի պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը նշեց, որ համաձայնագրում *«առայժմ իրական հիշ բան կա»*: *«Կարեւորն այն է, ասաց նա, որ ստեղծվեցին աշխատանքային խմբեր, որոնք էլ կսանեն այդ ծանրությունը»*: Այն հարցին, թե հանդիպումը որքանով էր հաջողված, Վ. Սարգսյանն ասաց. *«Քաղաքական իմաստով այն հաջողված էր եւ կարելի է ասել, որ մենք զգացինք Ռուսաստանի աջակցությունը, բայց իրականում առայժմ ոչինչ չկա»*: Ինչ վերաբերում է ռուսական զորքերի դուրս բերմանը, աղա *«այդ բանակը կմնա»*, եզրափակեց նա:

Այսպիսով, ավարտված հայ-ռուսական բանակցությունները նախանշեցին մեր երկու պետությունների միջեւ փոխհամագործակցության նոր եւ առավել կարեւոր բնագավառներ: Դրանց արդյունավետությունը ցույց կտա ժամանակը: Թեեւ արդեն նախօրեին ԱՊՀ գինված ուժերի հրամանատար Շապոշնիկովի հայտարարությունը եւ Հայաստանում Ռուսաստանի պաշտոնական ներկայացուցիչների հաստատական աջակցության ելույթները հիմք են տալիս եզրակացնելու, որ Ռուսաստանը լրջորեն է վերաբերվում հարավային երջաններին եւ հատկապես Հայաստանի խնդրին, ինչը կրկին անգամ իր ազդեցությունն է ընձեռում Թուրքիայի պաշտոնական երջանակների ժամ առ ժամ փոփոխվող դիրքորոումների վրա:

Համենայն դեպս, Հայաստանի նախագահի ազգային անվտանգության գծով գլխավոր խորհրդական Ատոս Մանուչարյանը, գրական գնահատելով հանդիպումը, նշեց, որ այն էական տեղաշարժ էր հայ-ռուսական հարաբերություններում: Իսկ նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածին կատարած այցից եւ Մոսկվա վերադառնալուց հետո, պետքարտուղար Գենադի Բուրբուլիսը հայտարարեց, որ ինքը կարողացավ լիովին իրականացնել նախագահ Ելցինի հանձնարարությունը:

Դե ինչ, Ռուսաստանը երկարատեւ խաղերից հետո կրկին վերադառնում է երջան...

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

## Այց Վեհափառ Հայրապետին

Երեքշաբթի, մայիսի 19-ին ՌԱԿ ›ենտրոնական եւ ՀՌԱԿ հանրապեական վարչությունների ատենապեներ դոկտ. Արտավիր Գյոնջյանը եւ Դուբեն Միրզախանյանը այցելեցին Մայր աթոռ Ս. Էջմիածին, որտեղ ավելի քան մեկ ժամ տեւողությամբ տեսակցություն ունեցան Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հետ:

Խոսակցությունը նվիրված էր ազգային-եկեղեցական հարցերին, ընդգծվեց որ Ս. Էջմիածնում վերջերս գումարված եպիսկոպոսական սուրհդակցական ժողովը որոշակի նյութ կարող էր տալ եկեղեցական հարաբերությունների, բեմերի վիճակի, մեր եկեղեցական տագնապի, ինչպես նաեւ նորաստեղծ «Հայաստան» հիմնադրամի իրականացման ուղիների մասին:

Վեհափառը հայրապետը գոհացավ խիստ ընդհանուր գծերի մեջ ներկայացնելով իր պատկերացումները արծարծված հարցերի մասին, իսկ դոկտ. Արտավիր Գյոնջյանը վերահաստատեց այն ծրագրիտ միտքը, թե ներկայիս Հայաստանի եւ սփյուռքի միջեւ բաղաքական-գաղափարախոսական որեւէ հակադրության հենակետ մնացած չլինելով, այլեւս ոչ մի պատճառ չկա արհեստականորեն շարունակելու եկեղեցական տագնապը, հակաթոռի կարգավիճակն ու բեմերի բռնագրավումը:

Վեհափառը հույս հայտնեց, որ հետզհետե երկու աթոռների միջեւ առկա բարյացակամության մթնոլորտը, ի վերջո, կտարածվի նաեւ բեմերում, հարթելով տարաձայնությունները: ■

### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի մայիսի 24-ին, կիրակի օրը, ժամը 10-ին տեղի կունենան ՀՀ Պաշտպանության նախարարության դպրոցա-գրոհային առաջին գընդի նորակոչիկների երդման արարողությունը, որին կարող են ներկա լինել բոլոր ցանկացողները:

*Հասցեն՝ Նուբարաշենի 7:*

## Համագործակցությո՞ւն, թե առճակատում

ԱԻՄ-ի պաշտոնաթերթ «Свобода»-ի մայիսի թիվ 8 համարում լույս էր տեսել «Отслужили, теперь вон!!!» վերնագրությամբ մի հոդված, որի չորս հեղինակները (Վ. Կիրեեւ, Ս. Դվորյաշկին, Վ. Ռեւա, Յու. Պիվովարով) իրենց բողոքն էին հայտնում հանրապետությունում տիրող անիշխանության եւ աղօրինությունների նկատմամբ: Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին ուղղված դիմումի մեջ (պատճեններն, իհարկե, չէին մոռացել ուղարկել նաեւ, ի թիվս այլոց, Ռուսաստանի նախագահին, ինչպես նաեւ երկու հանրապետությունների զանգվածային լրատվության միջոցներին) ասվում էր, որ սկսած 1992 թ. մարտից մինչեւ այսօր Հայաստանում շարունակվում են օուսալեզու բնակչության նկատմամբ իրականացվող հալածանքները, որոնք արտահայտվում են բնակարանների զավթումով ու թալանով, բնակիչների վռնդումով եւ այլն: Դիմումի հեղինակները, որոնք գինվորականներ են, պնդում են, որ մարտի 24-ից մինչեւ ապրիլի 22-ն ընկած ժամանակահատվածում իրենք զենքի ուժով վռնդվել են իրենց օրինական բնակարաններից, իսկ տարբեր հասցեներով ուղարկված բազմաթիվ դիմում-բողոքներն առ այսօր ոչ մի պատասխան չեն ստացել: Դիմումի վերջում գինվորականները պահանջում են դադարեցնել հալածանքները, վռնդել իրենց բնակարանները զավթած ՆԳՆ հատուկ նշանակության ջոկատի մարտիկներին եւ նրանցից մի հանիսի (Ս. Ավագյան, Ջ. Մարգարյան, Վ. Թեւոսյան) նկատմամբ իրեական գործ հարուցել:

Ի դեպ, դիմումի հեղինակները նշում են նաեւ, որ իրենցից յուրաքանչյուրը ՆԳՆ զորքերում ծառայել է 20 տարուց ավելի, եղել Արցախում եւ Հայաստանի սահմանամերձ երջաններում, գինվորական մասի կրճատումից հետո անցել քոչակի եւ այժմ աշխում է երեւանում:

Եւ ահա «Ազգ»-ի խմբագրություն ենական միլիցիայի հատուկ նշանակության ջոկատի մարտիկներ Վալերի Թեւոսյանն ու Սամվել Դոնոյանը, որոնք ցանկանում էին ամեն կերպ պարզաբանում մտցնել այս հարցի մեջ եւ բացահայտել իրականությունը: Նրանք իրենց հետ բերել էին նաեւ «Юридический справочник для населения» գիրքը, որտեղ պարզորոշ կերպով գրված էր, որ ծառայողական բնակարաններն այնտեղ աշխողները պարտավոր են հանձնել ծառայությունն ավարտելուց հետո, մեկ ամսվա ընթացքում: Նրանց պատմածներից պարզվեց նաեւ, որ վերոհիշյալ չորս սրաներից ոչ մեկը 20 տարի չի ծառայել եւ նույնիսկ չի մոտեցել քոչակային տարիքին: Ավելին, նրանք պարզապես համաձայն հրամանի պարտավոր են իրենց ծառայությունը շարունակել Ռուսաստանի եւ Ուկրաինայի տարբեր բաղաքներում եւ այս ամբողջ աղմուկը բարձրացրել են միայն նրա համար, որպեսզի կարողանան վաճառել իրենց ծառայողական բնակարանները եւ մեկնել Հայաստանից: Մանավանդ որ, ինչպես պատմեցին հատուկ ջոկատի տղաները, նրանց ընտանիքներն արդեն մեկնել են, իրենք էլ իրերը կապած ›պասում են նպատակավոր գործարի: Նրանց մինչեւ անգամ արդեն հաջողվել է այդ բնակարանների վերաբերյալ ինչ-ինչ ա-

digitised by A.R.A.R.@

# Լեռնային Ղարաբաղ. պատերազմի դեմքը

**Քաղաքական եւ ռազմական խոշոր ցնցումներ, փառահեղ հաղթանակներ, մի նոնակի պատճառով մի ամբողջ գյուղի կորուստ, կատաղի կռիվներ մի ինչ-որ բլրի համար... Սա մեր այսերի առջեւ է: Սա ավելի «հեշ» է. վերցրին, կորցրին, փոխեցին, սրանեցին... Այս բոհուբոհից 300-400 կիլոմետր հեռու սա հեշ է գնում, կարծես գեղն իր հունի վրա դարերով չի չարչարվել կամ լուսինը մութ կողմ չունի: Ունի՛, եւ ժամանակն է արդեն նայելու այդ կողմ, հանգի պայքարը միայն պատերազմը չէ, ճակատի առաջին գիծը չէ, այլեւ ամուր թիկունքը, ուժեղ տնտեսությունը, առողջ կյանքը: Քանզի ներհին բշնամությունը ավելի սարսափելի է:**

Գյուղերում կարծես մի հիչ հեշ է: Գնում ես դիրքեր, հետեւիցդ հիչումիչ հասցնում են բոնրահաց. պանիր. կարտոֆիլ: օգնություն ենկած մակարոն. վերմիշել: Դիրքեր կարելի է իջնել նաեւ ոտով. եթե վառելիք չկա: Վառելիքն ավելի կարեւոր բաների համար է վիրավորներ. դիակներ պետք է հասցնել ուղղաթիռների մոտ. բնդանոթը պետք է տեղափոխել: Զորանոցը բացօթյա է. պատսպարանության երկու-երեք գիծ ամրացված ավազով լի պարկերով. բարերով. խաղողի այգիների բետոնե սյուներով: Հետ բլինդաժն է ողարկման բոլոր օրենքներով: Զնոանը ներսում փայտի վառարան է. որի ծխնելույզը հանվում-բարցվում է խիտ թիերի մեջ կամ այնպիսի տեղ. որ ծուխը չերեւա: Շատ ծուխ չանելու համար մեկ-երկու փայտ են գցում ու ծխի մի մասը բաց բողնում բլինդաժի մեջ: Ներսում տեղերը խոմփոցով բնած են: Ամենահարմար «բարձը» ԴՇԿ-ի եւ ավտոմատի փամփուշտների արկղերն են. գնդացիրի փամփուշտների փաթաթակը: Բոլորի համար մի տեղ պիտի ճարվի. բանի հոգի էլ ներս մտնեն: Երկհարկ մահճակալներ են. ինչպես կանոնավոր բանակի զորանոցներում: Բլինդաժի հետեւում «ճաշարանն» է. ավելի հեռու...

Այո. կարծես թե գյուղում մի հիչ հեշ է: Իսկ բաղաքներում լրացուցիչ խնդիրներ են ծագում:

Ստեփանակերտը բոլոր ժամանակների պատերազմական բաղաքների պես է: «Գադի» հենց միայն ձայնային ալիքներից փորվել են բաղաքի բոլոր աղբակիները. փոխարենը պոլիէթիլեն է խփած. այն էլ տեղ-տեղ: Քաղաքում գրեթե ոչինչ չկա: Ալյուրը տրվում է կտրոններով. ամիսը 1 կիլոգրամ. օրական ստացվում է 33 գրամ (տարեց ստեփանակերտցիներն ասում են. թե պատերազմի ժամանակ իրենց օրական 300 գրամ հաց էին տալիս): Թղթակից. լուսանկարիչ Լեւոն Արվանդյանը. որ երկու օր առաջ է վերադարձել Ստեփանակերտից. բաղաքում մի խանութ միայն տեսավ. որ բաժանում էին ալյուրը: Զինվորների բաժինը մի հիչ շաս է. եւ հացը թխվում է բաղաքում. դիզելային փոռում: Զինվորներին տալիս են նաեւ պահածոներ: Քաղաքի շուկան աշխատում է միշտ ժամը երկուսը: Այնտեղ հիմնականում կանայք են վաճառում. դեղից-դեղ ծռ. միս: Կաթնամթերք չկա: Քաղցրեղեն ընդհանրապես: Ամենաշատ աչքի է զարնում բաղաքի սանիտարական վիճակը. որը բարելավելու ուղղությամբ գրեթե ոչինչ չի արվում վառելիք չկա: Փլատակներ. աղբակույտեր. մոխիր: Ծառերը վաղուց հատվել են. մարդիկ վախենում են ավելի հեռուն գնալ փայտի համար: Վախը ամենազոր է. տարիներով կուտակված վախը արդեն բնազդ դարձած գոյավիճակ: Ստեփանակերտցիների մի մասը դեռեւս ննջասենյակում է: Քաղաքի տակ նրանք բանջարանոցներ ունեն. որոնց մի մասն է հիչ թե շատ մշակված: Վառելիք չկա. սերմացու չկա. ջուր չկա. չկա... Միտք պայքելու շափ անզորություն. հուսախաբություն:

Զինվորների զորանոցները նույնպես հիմնականում նկուղներում են: Դրության համեմատ ամեն ինչ արվում է համակարգելու եւ կենտրոնացնելու մատակարարումները. եղածը: Շատ դժվար է. բայց արվում է: Զինվորներն իրենց գործը հիանալի են կատարում. նրանց համար պետք է ավելին արվի:

Մարդկանց հուսախաբությունը գալիս է նաեւ աշխարհից ու իրենց մասին որեւէ տեղեկության բացակայությունից: Հավաքվում են այստեղ-այնտեղ. շշուկը դառնում է իրական փաստ. եւ հիմնականում ծանր ու հուսահատեցնող: Մանավանդ. որ ոչինչ չկա. ոչ օգնություն. ոչ բան: Օգնության հարցը լուրջ է. միայն էնտուզիազմով. կոչերով ու ոգեւորությամբ չի լինի: Միջնորդներին է պետք ընտրել. տեղ հասցնողներին. կազմակերպողներին. հսկել նրանց... Եթե եղածի գոնե 70 տոկոսը հասնի. էլի մի բան է:

Ստեփանակերտից Խոջալու. Մալիբեյլի լավ հողակտորներ կան անմշակ: Ղարաբաղի բարեբեր հողը պատմության մեջ առաջին անգամ անմշակ է մնացել: Իսկ տեղը լրացնել դրսից բերելով. չի ստացվի: Եւ այդ տխուր հեռանկարը ավելի է հուսահատեցնում մարդկանց: Հակառակ ընդանց. ովքեր այլեւս տուն չունեն: Ովքեր կորցրել են իրենց մերձավորներին: Ո՞ւր գնան նրանք. հե՞շ է տուն դնելը: Իսկ շուտիով դժվար են գնում աղբելու տեր չկա. կազմակերպվածություն չկա: Պետք է ամեն ինչ վերահսկել. կորցրածների մասին հոգալ: Քանի ուշ չէ: Քանզի յուրաքանչյուր ընտանիքի կորուստը Արցախի համար ավելի զգալի է. քան...

Մարդկանց այդ վիճակը. ցավոք. օգտագործվում է: Շահումյանում Ռուսի Պարխ մոլոկաններն գյուղ կա. սրանք իրենց համար հեշ ձեր գտել են կողքի հայկական գյուղերից աղրանք են տանում-վաճառում աղբեջանցիներին. հայերի ունեցած-չունեցածն են մեքենայով տեղափոխում Հայաստանի սահման. փոխարենը ստանում են այն. ինչ ուզում են: Ոչ ոք չի խանգարում: Ոչ ոք չի խոչընդոտում: Ոչ ոք չի ուզում տեսնել. որ դա դավաճանություն է (փողով): Մեր մեջ էլ կան այդպիսիք. չնչին գներով այնտեղից սառնարան. լվացքի մեքենա. հեռուստացույց. կարի մեքենա (միեւնույն է. հոսանք չկա ու հեռանկարում չի էլ լինի). ավտոմեքենա. գանազան իրեր են բերում ու... Չնչին գներով են բերում. որովհետեւ այնտեղ դրանն էլ իմաստ չունի: Ինչպես իմաստ չունի ոչինչ (այդ բերողների համար): Չի բացառվում. որ նույն կերպ գենք էլ կբերվի...

Անկասկած նահանջելով. աղբեջանցիները թողնում են ոչ միայն գենք ու զինամթերք. այլեւ իրենց դիակներին: Դրանք օրերով ընկած են մնում... Առաջ փոխանակում էին կատարում. հիմա այլեւս նրանք չեն էլ հետաքրքրվում իրենց ընկերների մարմիններով: Եւ դիակները օրերով ընկած են մնում:

Լեւոն Արսենյանցը վկայում է. որ Շուշիի նկուղներում դեռեւս ադրբեջանցիներ կան: Սովածանում-դուրս են գալիս: Նրանք արդեն հասցրել են սպանել 1 հայի եւ մնկին էլ վիրավորել: Քաղաքում անհրաժեշտ է պատեհային ժամ մցնել եւ կարգավորել ելումուտը: Հարկավոր է պահել ու յուրացնել նեղածը. չփչացնել: Դա հատուցումն է. ոչ թե եսիմ ինչ: Սա համառորեն չի գիտակցվում. էլի բնազդով: Դա մերն է. ոչ ոք հեշ չի գալու. չի վերցնելու: Սա ցավալիորեն չի գիտակցվում: Պետք է ջատղ բնակեցնել. մանավանդ. որ անտուն մարդիկ շատ-շատ են: Նրանք որտեղի՞ց են գալու. սեղան. այլ իրեր գտնելու: Գուցե Երեւա՞ն. որ սառնարանը 50 հազար արժե: Չէ՞ որ նրանք նաեւ երեխա են ունենում:

Կյանքը խխունջի պես դանդաղ սողում է: Մարդիկ (չեմ ուզում ասել հերոսաբար) տանում են իրենց խաչը: Հանում մի անգամ ասված խոսքի. եւ սա պետք է օրինակ լինի: Հայաստանի հայերը պետք է օրինակ վերցնեն. որ եթե արեւմտյան կողմից ներխուժում լինի դիմադրեն: Ով էլ որ ներխուժի: Եթե հաղթվենք էլ արժանապատվությամբ: Թե չէ՝ աշխարհի ոչ մի երկրում մեզ գրկաբաց չեն սպասում:

Իսկ հայոց արեւելյան կողմը պինդ է կանգնած. հանուն մի անգամ ասված խոսքի. ի սկզբանե էլ խոսքն է եղել:

**ՀԱՅԿԱՋՆ ՂԱՀՐԻՅԱՆ**

## Մեկ տարի առաջ զոհվեց մեր ընկերը

**Անցյալ կիրակի. մայիսի 17-ին. լրացավ մեր կուսակից Արամ Ջոհրաբյանի ողբերգական մահվան տարելիցը: Շահումյանի շրջանի 1-ին գերեզմանատանը տեղի ունեցավ զոհվածի հիշատակին նվիրված հուշաբյուրի բացման արարողությունը: Հուշաբյուրը ձեռնարկել եւ կատարել են Սիսիանի շրջանի սկաուտները. որպես հարգանքի տուրք Սիսիանում սկաուտության առաջին նախաձեռնող բնաստեր մարզիչի հիշատակին:**

**Արարողությունը բացեցին Սիսիանի սկաուտության մասնաճյուղի ատենապետ Ս. Խաչատրյանը. խմբապետ Նազելի Հովհաննիսյանը. մանկավարժական ինստիտուտի դասախոս Մանվել Պողոսյանը եւ ուրիշներ. որոնք ներկայացրին սկաուտական շարժմանը նվիրված վաղամեռիկ Արամ Ջոհրաբյանի գործերը. ընդգծելով հետմահու լույս տեսած «Սկաուտության վերածնունդը Հայաստանում» գրույկը:**

**Ի երախտագիտություն նրա անցյալի. կենտրոնական վարչությունը Սիսիանի բանակումները եւ Հայաստանում գործող միակ սկաուտական բանգարանը կոչել է Արամ Ջոհրաբյանի անունով:** ■

## Էչիբեյ. Ոչ մի հայլ հեշ

Ադրբեջանի ժողովրդական ճակատի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը «ոչ մի հայլ հեշ» կոչով դիմել է ԱԺԾ-ի կողմնակիցներին. որոնք մարտական գործողություններ են վարում հայ-ադրբեջանական կոնֆլիկտի գոտում: Ազգային հեռուստատեսությամբ հնչած դիմումի մեջ նշված է. որ *«հայրենիքին եւ ժողովրդին մատուցու վտանգ է սպառնում. Ադրբեջանի հողերը բշնամին բռնագրավել է»:*

ԱԺԾ ղեկավարի հայտարարության մեջ ասվում է. որ մարտական ճակատը դասալիքներ եւ դավաճաններ խիստ կպատժվեն եւ ԱԺԾ-ի. եւ պետական կառուցվածքների կողմից:

## Լուրերի հոսքում

### Սիրիան եւ Եգիպտոսը դե

Մայիսի 20-ին հեռախոսով հ յաստանի եւ Սիրիայի արտգործն խարտներ Րաֆֆի Հովհաննիսյա եւ Ֆարուկ ալ-Շարաան ննարկել իրավիճակը Լեռնային Ղարաբաղո եւ Նախիջեւանի հետ սահմանա ծում: Ինչպես հաղորդեցին Հայա տանի մամուլի կենտրոնում, Սիրիա նախարարը դեմ է արտահայտվել, հայադրբեջանական կոնֆլիկտը ն նարկվի Իսլամական համաժողո կազմակերպության նիստում: Այդո սի առաջարկ էր արել Թուրքիա արտգործնախարար Հիմմեթ Չեթին Ալ-Շարաայի խոսերով, այդ հար պետք չէ մտցնել օրակարգի մեջ, ն ցի որ դա կոնկրետ հարց չէ չի կարելի հայադրբեջանական հ կամարտությանը հաղորդել կոն կան բանագավորում:

Նույն օրը Րաֆֆի Հովհաննիսյ նը հեռախոսազրույց է ունեց նաեւ եգիպտոսի արտգործնախարա հետ, որը նույնպես դեմ է արտ հայտվել, որ այդ կոնֆլիկտը սպան կրոնական բանգ:

Նախորդ օրը, մայիսի 19-ին Րա ֆի Հովհաննիսյանը խոսել է Ֆրա սիայի արտգործնախարար Ռոլս Դյումայի հետ: Խոսելով Ղարաբա գոտում տեղի ունեցած վերջին իր դարձությունների մասին, մասնավ ապես, Շուշիի եւ Լաչինի հետ հայ նախարարը նշեց, որ ԼՂՀ ի նադատամարտության ուժերը իրե են բացել մարդասիրական օգնո յան ապահովության համար անհր ժեշտ միջանցը: Այն արդեն գործո է: Հայաստան են տեղափոխվում վ րավորներ, իսկ Ղարաբաղ դեղորա եւ սննդամթերք: ■

## Էչիբեյը հույսը չի կորցնում

Ադրբեջանի ժողովրդական ճակատի առաջնորդ Աբուլֆազ Էչիբեյը հայտնել թե իր հանրապետությունը չի մտն ներկայիս ԱՊՀ. դա միանշանակ «Մենք գնում ենք, որ բոլոր տեղ կի պայմանագրերը պետք է լին միայն երկկողմ եւ փոխշահավետ ընդգծել է նա «Կոմսոմոլսկա պրավդա»ին տված հարցազրույցո

Խոսելով Ռուսաստանի հետ հար բերությունների մասին, նա հայտ է, թե Բաքվում երեք հոգանոց հան նախաձեռնություն է ստեղծվել, որը մոտ ժ մանակներս կմեկնի Մոսկվա կա վորագույն հարցեր ննարկելու:

Էչիբեյը նշել է, որ չնայած Շ ւշիի եւ Լաչինի անկմանը, Ղարաբ ղյան խնդրի *"խաղաղ կարգավորմ* հնարավորությունը դեռեւս մնում Նա պատրաստ է ընդունել ցանկ ցած միջնորդություն, «եթե այն տակար է»: Իրանի միջնորդությու ըստ նրա, անցուտուտ է: «Եթե ա պիսի պետություններ, ինչպես Թ րքիան, Ամերիկան, Ռուսաստանը, Ո րաինան միջնորդեն, հարցը կլո վի», ասել է նա:

## Մենք ոչ մի կապ չունենք

Երեկ Ռուսաստանի անվտանգ յան նախարարության հատարակ կան կապերի կենտրոնի պետ Անդ Շեռնենկոն հերքեց «Նեզավիսիմա գազետա» լրագրում մայիսի 20-հրապարակված «Մարդասպա խոսնովանությունը» վերնագրով ղեկությունը: Հոդվածի հեղինակ վկայակոչելով Բաքվի ռադիոյի հ ղորդումը, մասնավորապես հաղորդ է, թե Ռուսաստանյան Ֆեդերացիա անվտանգության նախարար Վիկտ Բարաննիկովը եւ արտաին հետախ զության ծառայության տնօրեն Ե ևի Պրիմակովը գաղտնի կարգադր յուն էին տվել Ադրբեջանի ազգ յին անվտանգության նախարար Ս դիխովին: Այդ ամենը արվել էր Մ թալիբովին իր նախկին պատասխ վերականգնելու համար: Ինչպես հ ղորդեց Անդրեյ Շեռնենկոն, «Ռուս տանի հատուկ ծառայություննե նմանատիպ կարգեր չեն ունեցել վերոհիշյալ Սադիխովի, ոչ էլ Ադր ջանի հատուկ ծառայություննե հետ»: Նա նշեց, որ Ռուսաստա լրատվության միջոցներում տարա ծված Բաքվի ռադիոյի հաղորդագր յունը կրում է տարրել բնույթ «նպատակ ունի սրել առանց այդ բարդ իրավիճակը շրջանում»:

digitised by A.R.A.R.@

# «Հայլուրի» շուրջ լարվածության եւս մի փուլ կամ ինչո՞ւ բացեցին «Հայլուրը», եթե ոիտի նորից փակեին

«Հայլուրի» վերաբերյալ որոշ թեւավոր մտերին (օրինակ, որ «Հայլուրը» վաս փակելուց բուռւլիզմ է առաջանում», «Հայլուրը» վերածվել է լուռ հայի» եւ այլն) ավելացավ եւս մեկը՝ «Այն սուրը, որ փակեց դավածան «Հայլուրը», կփակի եւ ուրացող «Արցախ» սուդիան», ասաց Սամվելը»:

«Հայլուր» լրատվական ծառայությունը համաոորեն ու անընդհատ շարունակում է փակվել, ինչ անվամբ էլ հանդես գա՝ «Հայեր» ծրագիր, որի հենց առաջին հաղորդումն արգելվեց, «Արցախ» լրատվական սուդիա, որը 3-4 անգամ եթեր դուրս եկավ:

Պատճառն ա՞յն է, որ «Հայլուրի» երիտասարդ ու անհնազանդ լրագրողները դասեր չեն առնում եւ չեն էլ փորձում չափավորել իրենց ելեքտրային գործունեությունը: Իսկ միգուցե նրանց ծեռնտո՞ւ է իրենց փակման շուրջ ընդդիմադիրների բարձրացրած աղմուկը, որպես մամուլի ազատության իշխանությունների կողմից սահմանափակման արձանագրված առայժմ միակ դեպքի...

**ԱԼԵՔՍԱՆ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ – «Հայլուր» լրատվական ծառայության տնօրեն**

**ՍԱՄՎԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ – Հայաստանի հեռուստառադիոռեժիսվարչության պետ**

Մեր շուրջ եղած աղմուկը մեզ ոչ խանգարում է, ոչ էլ օգնում:

Շուտիի գրավման օրը տրված հաղորդումից հետո կուսակցությունների հետ հանդիպման ժամանակ Լեւոն Տեր-Պետրոսյանը խիստ դժգոհել էր մեզնից: Ասել էր, որ զարմանում է, թե ինչո՞ւ կարելի է թույլ տալ պետական հեռուստատեսությամբ այդպիսի անպատասխանատու վարքագիծ դրսեւորել:

Հաջորդ օրն Արցախից վերադարձավ մեր գեղարվեստական դեկավար Գագիկ Սիմոնյանը, որը նկատահանել էր Շուտիի իրադարձությունները: Ադեն կիրակի օրն ազում էինք այդ հաղորդումը եթեր տալ հետաձգեցին: Երբ նշանակված օրն էլ նույնը տեղի ունեցավ հասկացա, որ հանրապետության նախագահի եզրակացությունն արդեն տեղ է հասել, ու այլեւս մեզ եթեր չի տրամադրվի:

Մեր ստուդիան բացվել էր Արցախի իշխանությունների խնդրանքով ու ընտրությունը մեզ վրա էր կանգ առել անձամբ Արթուր Մկրտչյանի կողմից: Ոչ միայն մեր կարծիքներն էինք ներկայացնում, այլեւ Արցախի իշխանությունների պատճառնական տեսակետները, եւ եթե այսօր մեղադրվում ենք հակառեւականության մեջ, ուրեմն, ըստ Սամվել Գեւորգյանի, Արցախի իշխանությունների տեսակետն՞րն են դեմ Հայաստանի պետական շահերին:

Սկզբից «Հայլուրի» եւ «Հայերի», հետո «Արցախ» ստուդիայի փակումն ինձ նաեւ այլ բան է ապացուցում, որ հանրապետության իշխանությունները, ՀՀԾ դեկավարությունն ու անձամբ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը վախենում են իմ ստեղծած ծրագրից: Եթե 10 երիտասարդների ջաբաքական 15 րոպե արտահայտվող կարծիքը կարողանում է սարսափեցնել ամբողջ պետական ապարատին իր նախագահով, ուրեմն իշխանություններն իրենց այնքան էլ ամուր չեն զգում:

Հետացել եմ սեփական դիմումիս համաձայն ու ինչի հետ ստեղծությունը ՀՀԾ-ի դագանակն է (Սամվել Գեւորգյանի նկատմամբ ոչինչ չունեմ. նա ընդամենը կատարող է), այստեղ չեմ աշխատի: Բայց նաեւ ուզում եմ հենց ՀՀԾ-ին խոստանալ, որ դեռ կվերադառնամ...

Մյուսներին առաջարկվել է մրցել «Լրաբերի» մեջ, բայց բոլորը հրաժարվել են: Ուզում են աշխատել, բայց որպես առանձին խումբ, ոչ որեւէ խմբագրության կազմում: Մեզ հերիք էր նաեւ Սամվել Գեւորգյանի գրաճնությունը, մնացել էր, որ էլի մի 5-6 գրաճնիչներ գլխներիս կանգնեին:

Փաստորեն, «Հայլուրը», որ «Արցախ» ստուդիայի անվան տակ փորձեցի պահպանել, մինչեւ ավելի լավ ժամանակները, այլեւս գոյություն չի ունենա...

Ինչ վերաբերում է այսօեղ գրաճնության ծաղկմանը, առյա զարմանալի է, որ ուրիշ ոչ մի լրագրող կամ ստեղծագործական միավորում այդ մասին չի խոսում: Մեր բոլոր հավաճներին ինչ եմ խընդրում, որ լրագրողական ավելի ակտիվ բաղաքականություն վարեն, որպեսզի կոնկրետ փաստերով ներկայացվեն կառավարության բացթողումները, թերությունները: Արդյունքը չսանալը պայմանավորված է կոնկրետ լրագրողներով: Ներողություն եմ խնդրում, բայց շատերի ուղեղները կարծես արդեկված լինեն, վախը մեջները նստած...

Ինչ վերաբերում է «Հայլուրին», կարծում եմ, որ ոչ միայն ինձ դուր չի գալիս միակ ճշմարիտի նրանց կեցվածքն ու այդ ոճով ներկա բաղաքական գործիչներին տրվող դասերը: Բոլորին ամեն ինչում մեղադրում են, բայց ընդամենն ընդհանուր հայտարարություններով ու ակնարկներով, առանց կոնկրետ փաստերի: Խիստ որոշակիորեն դրսեւորվում է այդ խմբի մեջ մտնող որոշ լրագրողների կուսակցականությունը:

Բայց թող հիշեն, որ «Արցախ» ստուդիան ինչ բացեցի, բանի որ նրանցից շատերը ընդհանի լրագրողներ են: Արցախի իշխանություններն այս կաղակցությամբ որեւէ միջնորդությամբ ինձ չեն դիմել: Ջուտ «Հայլուրի» տղաների կարծիքն է, որ այս հարցին խառնված է հանրապետության նախագահը:

**Մայիսի 20-ին տեղի ունեցավ «Հայլուրի» աշխատակիցների մամուլի ասուլիսը, որտեղ մասնավորապես հերքվեցին հեռուստառադիոռեժիսվարչության պետի ներկայացրած որոշ տեղեկություններ: Ասուլիսին ներկա Արցախի հեռուստառադիոռեժիսկոմի նախագահի տեղակալ Վարդգես Բաղրյանը հայտարարեց, որ «Արցախ» ստուդիայի փակումից հետո Հայաստանի հեռուստատեսության ուրիշ ոչ մի ծրագրի այնտեղ ելույթներ չեն մասնակարարի: Ուրախ պատճառաբանություն բերվեցին նաեւ այն փաստարկները, թե ոչ մի երաշխիք չկա, որ իրենց ելույթերը չեն գրաճնվի, չեն «մկրատվի», լավագույն հատվածները եկամուտ ստանալու նպատակով արտասահմանին չեն վաճառի եւ այլն:**

**Հեռուստատեսությունում առկա գրաճնության մասին վկայում են նաեւ ասուլիսում ներկայացված այն փաստերը, թե ինչպես է կանխվել «Or յորերորդ» ծրագրով «Արցախ» ստուդիայի փակման հետ կապված հարցազրույցների ցուցադրումը, ու ինչեր են հաջորդել «Լրաբերի» մեկնաբան Մանյա Ղազարյանի կողմից սեփական նախաճեռնությամբ «Հայլուրի» հայտարարության փոփոխված տեքստը եթերում կարդալուն: Ըստ երեւույթին, հեռուստատեսությունում մեկնաբան մնալու գրավականը էլեկտրական հուշարարից պատրաստի տեքստերը կարդալն ու սեփական, ինճնուրույն որեւէ խոսքից ձեռնպահ մնալն է: Գրաճնության մասին, սեփական փորձի վրա հիմնվելով, վկայեց նաեւ նախկինում որպես հաղորդավար հայտնի Կարինե Միրզոյանը, որն այժմ հեռուստատեսային «Անահիտ» ակումբի հեղինակն ու վարողն է. «Եթե ՀՀԾ-ից չես, հաղորդումդ անպայման նայվում է, պայմաններ են թելադրվում: Ապաջ գլավլիտի հետ գործ ունեիճ, հիմա ինկվիզիցիայի», հայտարարեց նա:**

**Ինչեւէ, այս պատմության մեջ ամենացավալին այն է, որ փաստորեն լուծարվեց Արցախից մշտական լրատվություն ապահովող մի կառուցվածք: Ի՞նչ է մեզ մատուցվելու դրա փոխարեն, ինչո՞վ է լրացվելու բացը: Միգուցե գեղագիտական բոլոր չափանիշները ոտնահարող «Շնորհավորում ենք» հաղորդաշարո՞վ, թե՞ «Սեգդոնյա» ամենօրյա դատնալու հավակնությամբ ռուսալեզու ծրագրով:**

**Միգուցե «Հայլուրն» իսկապես չի համապատասխանում պետական շահերի ներկա ըմբռնումներին, բայց, կրկնենք նորից, ի՞նչ այլ ծրագրեր ու ընդհանրապես ի՞նչ է առաջարկվում հեռուստադիտողին դրա փոխարեն:**

ՄՆՆՍ ԽՈՐԱՅԵԼՅԱՆ

# ... Բանը չհասավ դիվանբաուն

Վերջերս լրացավ Հայաստանի պետական Ֆիլհարմոնիայի 60-ամյակը: Բայց հոբելյանական այս տարեթիվը նշելու եւ կատարածն արժեւորելու նպատակով չէ, որ մայիսի 20-ին հրավիրվել էր աշխատակիցների ժողովը:

Դրա պատճառն ամենից առաջ այն վերաբերմունքն էր, որն այսօր Հայաստանի մշակույթի նախարարության կողմից ցուցաբերվում է իրենց նկատմամբ: Գաղտնիք չէ, որ վերջին տարիներին հանրապետությունում անտարբերության մատնված մշակույթը գտնվում է ողբալի վիճակում: Եւ դրանում, ինչպես ժողովում նշեց Ազգային Ֆիլհարմոնիկ գործակալության նախագահի տեղակալ Լաերս Մովսիսյանը, մեղքի իրենց բաժինն ունեն նաեւ Հայաստանի մշակույթի նախարարության որոշումները: Այսպես, անցյալ տարի միանգամայն անհիմն կերպով լուծարվեց Հայաստանի պետական Ֆիլհարմոնիան: Եւ միայն մշակույթի բազմաթիվ նշանավոր գործիչների բարձրացրած բողոքի ալիքը մեղմելու նպատակով եւ բազմաթիվ ու բազմապիսի ճակատներից հետո 7 ամիս անց բացվեց Ազգային Ֆիլհարմոնիկ գործակալությունը: Անցավ եւս երկուսուկես ամիս, մինչեւ վերջնականապես պարզվեց, որ մշակույթի նախարարությունը նորաստեղծ գործակալությանը բացարձակապես ոչնչով չի օգնելու, եւ վերջինիս աշխատակիցները ստիպված պիտի լինեն անցնել ինքնաֆինանսավորման (կամ, ինչպես խորհուրդ էր տվել մշակույթի նախարարը, զբաղվեն կարուճելով):

Բայց գործակալության գլխին նոր ամպեր էին կուտակվում, որոնք պայթեցին մշակույթի նախարարի հրամանի տեսքով, ըստ որի, առանց աշխատակազմի հետ գոնե ծանոթանալու խորհրդակցելու, Ազգային Ֆիլհարմոնիկ գործակալության նախագահ էր նշանակվում կոմպոզիտոր, «7 7 7» շոու ծրագրից ժողովրդին հաճախանոթ Արթուր Գրիգորյանը: Ժողովում ելույթ ունեցողների զայրույթի պատճառն ամենեւին էլ Արթուր Գրիգորյանի անձը չէր: Ավելին, ինչպես նշեցին նրանցից շատերը, պրն. Գրիգորյանն իսկապես տաղանդավոր կոմպոզիտոր է եւ հեռուստատեսության հաղորդումների գործ ֆոնի վրա կիրք ու հաճելի տպավորություն է թողնում: Աշխատակիցներն ուղղակի վրդովվել էին, որ Ֆիլհարմոնիկ գործակալությանը ոչնչով չօգնելուց եւ անգամ որոշ հարցերում խանգարելուց հետո, մշակույթի հարգելի նախարարն իրեն իրավունք է վերապահում առանց իրենց հետ խորհրդակցելու նոր նախագահ նշանակել: Վերջապես, ի՞նչ իմաստ ուներ ընդհանրապես պայմաներ նախկին իշխանությունների վարչահրամայական մեթոդների դեմ, եթե անգամ մշակույթի բնագավառում վարչարարությունը շարունակվելու է ավելի անմոռ եղանակներով:

Որոշակի դժգոհություններ հնչեցին նաեւ պետական նախարար պրն. Գրիգոր Առեջյանի հասցեին, որը կոչված է, ի թիվս այլ խնդիրների, զբաղվել նաեւ մշակութին առնչվող հարցերով:

Ինչեւէ: Ժողովի մասնակիցները որոշեցին դիմել մշակույթի նախարարությանը խնդրելով հնարավորություն տալ, որպեսզի իրենք լուծեն բոլոր տեսակի կազմային հարցերը: Որոշվեց դիմումը հասցնել մշակույթի նախարարություն մինչեւ նոր նախագահի ներկայանալը, որը հնարավորություն կտա խուսափել տհաճ միջադեպից: Նման հնարավորության մերժման դեպքում Ազգային Ֆիլհարմոնիկ գործակալության նախագահի տեղակալ Լաերս Մովսիսյանը խոստացավ, որ կոլեկտիվը կներկայացնի նոր դիմում: Ի դեպ, ժողովում հնչած մի շարք ելույթները չէին բացառում, որ երկրորդ դիմումն ուղղված կլինի ոչ թե մշակույթի նախարարությանը, այլ դատարանին:

Հարցի լուսաբանման միակողմանիությունից խուսափելու համար որոշեցինք դիմել նաեւ ՀՀ մշակույթի նախարար Հակոբ Մովսեսին: Ինչպես ասաց պրն. նախարարը, Ֆիլհարմոնիայի աշխատակիցների մեծ մասը պարզապես բանդիտներ են, որոնք տասնյակ տարիներ շարունակ պոռել են պետական միջոցների հաշվին եւ այժմ վախենում են զրկվել իրենց պորուստի միջոցներից: Բացի այդ, վերոհիշյալ ժողովի ամենաակտիվ մասնակիցները նախորդ չորս ամիսների ընթացքում բազմիցս առանձին-առանձին դիմել են իրեն Ֆիլհարմոնիկ գործակալության նախագահի պաշտոնը խնդրելով: Պարոն նախարարն ասաց նաեւ, որ ժողովի կազմակերպիչները խաբել են հավաքվածներին եւ մասնավորապես լրագրողներին ասելով, թե իբր գործակալությունը պետության կողմից չի ֆինանսավորվում:

Ինչեւէ: Ադեն ժողովի հաջորդ օրը մայիսի 21-ին պրն. Հակոբ Մովսեսն անձամբ կոլեկտիվին է ներկայացրել գործակալության նոր նախագահին, եւ ամեն ինչ հարթվել է: Բնականաբար, ոչ նախարարը, ոչ Ֆիլհարմոնիկ գործակալության փոխնախագահ Մովսիսյանը համար չէին գնում վեճի մասին մանրամասնորեն խոսել, մանավանդ, որ կրճերը, փառ աստծո, հանդարտվել են, եւ նոր բորբոքումների կարիք ամենեւին չկա:

Սակայն մի՞թե լրագրողը խաղալիք է կամ գործիք, որ ում ճեՖին ինչպես տա այնպես էլ վարվի, կամ բանուգործ չունի, ըստած սպասում է, թե որտեղ է պաշտոնակոիվ սկսվում, որ վազի, մեկ սրա կշեռքի ճաշին կանգնի, մեկ նրա: Այս հարցին երեւի կարող է պատասխանել մեզ իրենց ժողովին հրավիրած Ցոլակ Համբարձումյանը, որն, ի դեպ, իր ասելով, «Ազգ»-ի աշխատակիցների տարիքի չափ լրագրողի սպաժ ունի...

ԱՐՄԵՆ ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ

---

The New York Times երեկվա համարում գրում է

# Պատերազմ Նախիջեւանում

*Նախիջեւանը, Հայաստանը, Թուրքիան եւ Մ. Նահանգները*

Մինչ հայ աշխարհազորայինները ճնշում են գործադրում Նախիջեւանում եւ տիրապետություն հաստատում Լեռնային Ղարաբաղում, եւ մինչ Թուրքիան վիճարկում է իր միջամտությունը պաշտպանելու համար իր թուրք եղբայրներին, Բուշի վարչության բաղաքականությունը դեռեւս պարզ է գալիս ասեղի ծայրին:

Ամերիկյան բաղաքականությունը պահանջում է ուժգնորեն նպաստել հայերին (ազդեցիկ են հայերը հաստկաղես վճռական ընտրաջրան Կալիֆոռնիայում), իսկ բաղաքական նկատառումները կողմնորոշվել դեպի Թուրքիա (Կենտրոնական Ասիայում իրեւ Իրանին եւ Ռուսաստանին հակակշռող ուժ):

Այս բաբաքասկզբին պետքարտուղարության խոսնակ Մարգարեթ Թաթուայլերը պարբ էր գալիս այս երկու կողմնորոշումների միջեւ: Նա իր ասուլիսն սկսեց հայտարարելով, թե ԱՄՆ-ը *«չի ընդունելու ռազմական գործողություններով կամ բռնի ուժով կատարված կարգավիճակի միակողմանի որեւէ փոփոխություն Լեռնային Ղարաբաղում կամ Նախիջեւանում»*: Սակայն այնուհետեւ հետեւյալ երկխոսությունն ընթացավ.

**Հարց.** – Կարգավիճակն այն է, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի մաս է կազմում: Ազերիները ըստ երեւույթին չեն փորձում այն փոխել: Ճի՞շտ կլինի բացատրել, որ հայերն են փորձում:

**Թաթուայլեր.** – Գոյություն ունեն... մի շարք տեսակետներ այս առթիվ... այսօր մեր տեսակետն է, որ...

**Հարց.** – Ուրեմն իրավիճակն այն է, որ ԱՄՆ-ը պարզապես չի դիրքավորվելու նախահարձակին եւ զոհին որոշելու հարցում:

**Թաթուայլեր.** – Ճիշտ...

**Հարց.** – Ի՞նչ է նշանակում, թե ԱՄՆ-ը «չի պատրաստվում ընդունել միակողմանի որեւէ փոփոխություն» արտահայտությունը:

**Թաթուայլեր.** – Այս նախադասությունը մենք օգտագործում ենք մի շարք պարագաներում... Սանդարտ արտահայտություն է: Չեմ կարող ասել, թե ինչու, սակայն տարիներ ի վեր օգտագործվում է:

**Հարց.** – Սակայն այն սովորաբար օգտագործվում է վճռական գործողություններից առաջ: Դուք «չի ընդունելու» արտահայտությունը օգտագործեցիք նաեւ Պանամա մտնելուց առաջ: Արդյոք պատրաստվո՞ւմ ենք այս պարագայում էլ ուժեղ քայլեր ձեռնարկել:

**Թաթուայլեր.** – Որեւէ գիտեմ ոչ: Կուլիսների ետեւում նախագահ Բուշը եւ պետքարտուղար Բեյքերը հեռախոսով կապվում էին Երեւանի հետ: Նրանք հայ ղեկավարներին թելադրում էին կանգնեցնել կռիվը Լեռնային Ղարաբաղում, ընդունել ԵԱՀԽ-ի միջնորդությունը եւ իրենց աշխարհազորայիններին ետ հրել Նախիջեւանից: Իսկ, մյուս կողմից, Անկարային համոզում էին չմիջամտել:

Մինչ ամերիկյան դիվանագիտությունը անաչառ է, պետվարչությունը հետզհետե հակահայ է դառնում: Պաշտոնատարները չեն ընդունում Երեւանի այն բացատրությունը, թե իրենք չեն վերահսկում հայ աշխարհազորայիններին: Կարեւոր պաշտոնյաներից մեկի կարծիքով, հայերը, որոնք երկար ժամանակ եղել են զոհեր, փորձում են *«ռազմական փաստական իրավիճակներ ստեղծել տեղում, մինչ մեր ձեռները կապված են մեր ընտրություններով, ճիշտ այնպես, ինչպես սերբերը Բոսնիայում»*:

Այս համեմատությունը կեղծ է, եւ ամերիկահայերը լավ գիտակցում են ամերիկյան վարչության բեմումը Թուրքիայի կողմը: *«Սակայն այս տարի նրանք ոչինչ չեն կարող ա-*

digitised by A.R.A.R.@

# Հայրենիքը սփյուռքին կարոտ չէ, սփյուռքն է կարոտ հայրենիքին

1962 թ. ընդամենը 1000 հայեր էին ապրում Ավստրալիայում, իսկ այսօր այդ թիվը հասնում է 30 հազարի: Գաղութը հիմնականում կենտրոնացած է Սիդնեյ եւ Մելբուռն քաղաքներում, գլխավորաբար Սիդնեյում, ուր 25 հազար հայ կա, երեք եկեղեցի՝ հայ առաքելական, հայ կաթողիկե եւ հայ բողոքական, որոնք ունեն իրենց ամենօրյա մեկական դռները, գործում են երեք կուսակցությունները՝ ռամկավար, հնչակյան եւ դաշնակցական, մարզական, ընկերային միություններ, բարեսիրական հաստատություններ: Ավստրալիայի քաղաքական կյանքում դեռեւս հայ գործիչներ չկան, սակայն տնտեսական կյանքում հայերը բավականին հաջողակ են: Հայերը հիմնականում բժիշկներ են, դեղագործներ, ատամնաբույժներ, առեւտրականներ, լուսանկարիչներ, մանր առեւտրականներ, ոսկերիչներ:

Վերջերս «Հայաստան» հիմնադրամի կազմակերպչական աշխատանքներին մասնակցելու առաքելությամբ Հայաստանում էր գտնվում հայ Առաքելական Եկեղեցու Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի թեմի առաջնորդ Աղան եպիսկոպոս Պալիոզյանը, որն էլ հայտնեց, թե ավստրալահայ համայնքը իր վրա է վերցրել Հայաստանը Իրանի հետ կապող Մեղրու կամուրջի շինարարության ծախսերը, մոտ 2 մլն դոլար:

Աղան սրբազանը, որ ծնվել է Հալեպում, ուսանել Երուսաղեմում, Երեւանում, պատրաստվել նույն Երուսաղեմում, այնուհետեւ Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ 1975-ին փոխադրվել հեռավոր Ավստրալիա, նախապես որպես հովիվ, իսկ 1981-ից որպես թեմի առաջնորդ, մեզ պատմում է ոչ միայն ավստրալահայ գաղութի, այլեւ Ծայրագույն Արեւելքի այս ու այնտեղ ծվարած ու բողբոջող հայ կյանքի, հայ ծառատոհմի մասին:



**– Դուք ասանձնել եք Ծայրագույն Արեւելքի իրարից հազարավոր կիլոմետրերով հեռու գտնվող հայ գաղութների հոգեւոր առաջնորդի դերը: Մի հանի խոսքով չէի՞ք պատմի այդ գաղութների մասին:**

– Ծայրագույն Արեւելքի հայկական համայնքների սահմանը ձգվում է Սինգապուրից մինչեւ Հընկկոնգ: Գաղափար կազմելու համար ասեմ, որ Սիդնեյից Հնկկոնգ հասնելու համար 13 ժամ պետք է թռիչք կատարել օդանավով: Հընկկոնգում ունենք գլխավոր 3 հաղարներ Կալկաթա, Բոմբեյ եւ Մադրաս: Անցյալում այստեղ հայկական համայնքներ են եղել, դժբախտաբար այսօր մասների վրա հաշվվող հայեր են մնացել: Բայց Կալկաթայում գործում է Մարդասիրական ճեմարանը, որ հիմնվել է 1821 թ., սա հնդկական մակարդակով բացառիկ վարժարան է: Հնդկաստանի մի փոքր եմ ուզում հաղորդել, տեղացի ուսուցչուհիներից մեկը ոչ միայն խոսում է հայերեն, այլեւ գրում եւ կարդում: Այժմ նա հայերեն է դասավանդում մեր երեխաներին, եւ աշխարհաբար, եւ գրաբար: Ծայրագույն Արեւելքի գլխավոր կենտրոնն այսօր Կալկաթան է, ուր շուրջ 300 հայեր են ապրում:

Վեհափառ հայրապետի նշանակումից հետո առիթ ունեցա այցելել Հնդկաստան, կաղ հաստատել Բոմբեյի եւ Մադրասի հայերի հետ, շուրջ 10 օր եղա Կալկաթայում: Կարծում եմ, Կալկաթան այն հաղարներից մեկն է, որ կարող է հայրենիքի հետ սերտ կաղ հաստատել, եւ հայրենիքը կարող է այնտեղ իր հյուպատոսարանը հիմնել:

Հաջորդ հետաքրքրական վայրը Սինգապուրն է: Այն շատ փոքրիկ կղզի է, պատկերացրեք, 600 կմ հարակուսի տարածություն ունի եւ մի մասով միացած է Մալայզիային: Եւ այս փոքր տարածում ապրում է 3.25 մլն ժողովուրդ: Կարծում եմ, Հայաստանը շատ լավ դասեր կարող է քաղել այս երկրից: Այս կղզում ունենք հայկական եկեղեցի կառուցված 1835 թ., առաջին քրիստոնեական տաճարն է Սինգապուրում: Այստեղ ապրում են շուրջ 20 հայեր, որ հայախոս չեն, սակայն ամբողջ իրենց էությունը հայկականություն է շնչում: Շուտով, առաջին անգամ, Սինգապուրում ծնված հայ երեխա պիտի մկրտեմ: Տեղացի հայերը ուրախությամբ եւ մեծ անհամբերությամբ են սպասում այդ օրվան:

Մարիին գտնվում էի Թայլանդի մայրաքաղաք Բանգկոկում: Չգիտեի, որ այդտեղ հայություն կա: Վերջերս մի քանի հոգու գտա եւ հասցեները հավաքելով, թերթում հայտարարություն տալով գտա մոտ 35 հայերի: Այս մարդիկ ինձ հրավիրեցին Բանգկոկ: Ընդունելությունը շատ ջերմ էր: Հանդիպումներ ունեցա պետական, դիվանագիտական, առեւտրական, ընկերային, բարեսիրական կազմակերպությունների հետ, ելույթ ունեցա հեռուստատեսության իրենց կայանով, մամուլի ասուլիս տվեցի ռադիոներին եւ թերթերին:

Ընդունելություն կազմակերպեցին, որին ներկա էին Ռուսաստանի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Կանադայի եւ Ամերիկայի դեսպանները կամ նրանց ներկայացուցիչները: Նրանք իրենց գնահատականը տվեցին այս փոքր գաղութի գործունեությանը: Այս 35 հայերը մեկ շաբաթվա ընթացքում կարծես 35 հազար հայի գործ կատարեցին: Ի պատիվ իրենց պիտի ասեմ, որ այդ կարճ ժամանակամիջոցում 10 հազար ամերիկյան դոլար հավաքեցին ի նպաստ հայրենիքի օգնության:

Ծայրագույն Արեւելքի երկրներից Ֆիլիպիններում եւ Ինդոնեզիայում կան մի քանի հայ ընտանիքներ, որոնց չեմ այցելել, բայց հանդիպելու առիթ եմ ունեցել 1986 թ., երբ տոնեցինք Սինգապուրի եկեղեցու 150 ամյակը: Ֆիլիպիններում բնակվող մի հայ կա, Սարգիս Կարապետ անունով, որ Մանիլայում գրոսաշրջիկության ամենախոշոր ընկերություններից մեկի տնօրենն է: Սարգիս-Կարապետն ամուսնացած է Ֆիլիպինցի մի կնոջ հետ: Մի օր կինը մոտեցավ ինձ եւ ասաց. «Սրբազան, երկու որդի ունեմ, ուղարկեմ ձեզ մոտ, հայ աղջիկների հետ ամուսնացրեք: Ես Ֆիլիպինցի եմ, բայց ուզում եմ, որ զավակներս հայի հետ ամուսնանալով հայ մնան»: Նման երեւույթները շատ խոսուն են, ասում են, թե որքան զորավոր են մեր արմատները, նույնիսկ եթե հողի մեջ չեն:

**– Ձեր խոսքի սկզբում պատմեցիք հնդկահայ գաղութի մասին: Վերջին տարիներին Հայաստանում անհանգստությամբ էին հետեւում հնդկահայ գաղութի ծակատագրի վերաբերյալ տագնապոտ լուրերին: Մամուլով եւ հեռուստատեսությամբ հաղորդումներ հնչեցին, մեղադրելով Էջմիածնին, թե իբր Մայր աթոռը զլանում է իր ներկայացուցիչը ուղարկել Հնդկաստան:**

– Գաղութը, իրոք, գնալով նվազում է, պակասում: Կալկաթայում մի քանի հարյուր հայեր են մնացել, որ խառը ամուսնություններ ունեն եւ հայախոս չեն: Բայց դա չի նշանակում, թե ամեն ինչ կորած է: Ամեն ինչ հակողության տակ է: Նախ, ճշտեմ, որ Ամենայն Հայոց կաթողիկոսը բնավ չի լինել գաղութը, այլ իր ուշադրության առարկան է դարձրել այն: Կարող եմ փաստել, 1982-91 թթ. ես 7 անգամ այցելել եմ Հնդկաստան: Սա իմինին փաստ է, որ Վեհափառն աննկատ չի թողել գաղութը: Երկրորդ եղած կալվածքներն իրենց տեղն են եւ վարչություն ունեն: Դեկտեմբերին վարչության կազմը փոխվեց: Ատենապետը, ինչպես ասում եմ, քիզնեսմեն մարդ է: Նա ինձ հետ մտերմական կապի մեջ է, անհրաժեշտության դեպքում ուղղություն է խնդրում ինձնից, խորհրդակցում ենք կալվածային հարցերի վերաբերյալ: Երկրաշարժից մինչեւ 1992 թ. հունվարը Կալկաթայում ճահանա չկար, եւ դրա մեղքը Վեհափառինը չէր, այլ այն եկեղեցականինը, որ նշանակվեց ու չգնաց:

**– Անցյալ այցելության ժամանակ ասացիք, որ ավստրալահայ գաղութը բազմաթիվ հայրենադարձներ է անում, օգնելով թե՛ Հայաստանին, թե՛ Արցախին: Արդյոք Ավստրալիայի պետական իշխանությունների կամ դեսպանատների առաջ նույն ուժգնությամբ շարունակվո՞ւմ է հայանպաստ գործունեությունը:**

– Աշխատանքները շարունակվում են եւ շատ ավելի կազմակերպված ընթանում, ավելի լայն շրջագծով: Արդեն իսկ մի քանի անգամ դաշնակցային կառավարության խորհրդարանում հարց է արծարծվել եւ Հայաստանի, եւ Արցախի կառակցությամբ: Դրժբախտաբար, պետք է հայտնեմ, որ այդ աշխատանքները միանգամայն չեն կատարվում, յուրաքանչյուր քաղաքական կազմակերպություն առանձին է գործում: Անշուշտ, լավ միջոցառումներ են դրանք, լավ աշխատանքներ, սակայն երբ միասնաբար արվեր, շատ ավելի լավ կլիներ:

**– Ավստրալիայի մամուլը, հեռուստատեսությունը, հասարակական կարծիքը տեղեկացվա՞ծ են հեռավոր Հայաստանում կատարվող դեպքերին եւ արդյոք նրանք կողմնորոշում ունե՞ն:**

– Բնականաբար, այստեղի դեպքերը, փոփոխություններն իրենց արձագանքը գտնում են Ավստրալիայում: Սակայն առաջին լուրերը երբեմն հոսակ չեն լինում, անորոշ են: Մի շրջան կար, մանավանդ Խոջալուի դեպքերի օրերին, այդ տեսակետն ի նպաստ Ադրբեջանի էր: Բայց հայ կազմակերպությունները բավարար տեղեկություններ հավաքելով, կարողացան փոխել մամուլի եւ քաղաքական դեմքերի տեսակետները եւ արտահայտություններ մեջ հայանպաստ շեշտեր ներմուծեցին:

**– Ծայրագույն Արեւելքի հայությունը, մասնավորապես ավստրալահայ գաղութը ի՞նչ սոցտեխիներ ունի Հայաստանից, ինչո՞վ կարող է Հայաստանը օգնել, որ ավստրալահայ գաղութը ավելի հայ մնա:**

– Հաճախ ենք լսում, մանավանդ երկրաշարժից հետո, թե հայրենիքը սփյուռքի օգնության կարիքն ունի, առանց սփյուռքի հայրենիքը չի ապրի: Բայց ես միշտ ասում եմ եւ պետք է կրկնեմ, որ մենք սփյուռքն է, որ հայրենիքի կարիքն ունենք: Մեր օժանդակությունը, մեր օգնությունը մեր պարտականությունն է, երբ ուզում ենք սփյուռքում հայ մնալ, պետք է նպաստենք հայրենիքին: Հայրենիքին նպաստելով մենք մեզ եւ մեր հաջորդ սերունդները հայ կպահենք: Այնպես որ, սխալ տեսակետ է եւ ուզում եմ, որ բոլորը հստակ պատկերացնեն՝ հայրենիքը սփյուռքին կարոտ չէ, այլ սփյուռքն է, որ կարոտ է հայրենիքին:

Պատրաստեց
ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

## Սկանդալներ Թուրքիայում

### Հարավսլավացի գեներալը վերադարձնում է թուրքական մեդալը

Թուրքական մամուլում վերջին օրերին, բացի Արդրեջանի ռազմական անհաջողություններից, մեծ տեղ են գրավում այն սկանդալային պատմությունները, որոնց մեջ ընկել է Թուրքիան:

Սրանցից առաջինը պատահել է Հարավսլավիայում: Այստեղի դաշնակցային բանակի այժմ թոշակառու գեներալ Բրայավիչը Թուրքիայի կողմից նախապես իրեն շնորհված մեդալը հետ է հանձնել: Բրայավիչը, որը մեդալը հանձնել է Բելգրադում Թուրքիայի ավագ դեսպան Բերհան Էֆինջիին, հայտարարել է, թե «ինչը դա անում է վերջերս Հարավսլավիայի հանդեպ Թուրքիայի ցուցաբերած քաղաքական վերաբերմունքի պատճառով»:

Հիշեցնենք կարգով նշենք, որ 1983 թ. Ցեղասպանությունը դատապարտող հայ մարտիկները զգեցնել էին Բելգրադում Թուրքիայի ավագ դեսպան Գալիփ Բալկարին: Գեներալ Բրայավիչը գործողությունը կատարող Անդրանիկին ծերբակալելիս ծանր վիրավորվել եւ հաշմանդամ էր դարձել: Այս առիթով Թուրքիան նրան պարգեւատրել էր Թուրքական բարձր զինվորական շքանշանով:

### Նելսոն Մանդելան մերժում է թուրքական մրցանակը

Երկրորդը կապված է Նելսոն Մանդելայի հետ:

Սրանից մի քանի ամիս առաջ մշակույթի, լեզվի եւ պատմության Աթաթուրքի անվան ակադեմիան որոշում էր կայացրել Թուրքիայի ամենաբարձր «Աթաթուրքյան խաղաղության մրցանակը» շնորհել Նելսոն Մանդելային:

Սակայն, ըստ «Հյուրրիյեթ»-ի, այս հաղթող որոշումը կայացվել էր առանց նախապես Մանդելային տեղյակ պահելու, որի հետեւանքը եղավ այն, որ Նելսոն Մանդելան մամուլի ասուլիսում հայտարարեց, թե մերժում է այս մրցանակը, ասելով, թե «ինձ հետ համամիտ չեղողները քող մի պահ իրենք դնեն Թուրքիայում ապրող հրեաների տեղը» եւ շարունակեց. «Թուրքիան մարդկային իրավունքների պաշտպանության հարցերում տակավին շատ հայտեր պիտի անի, դրա համար առայժմ չեմ կարող Աթաթուրքյան խաղաղության մրցանակն ընդունել»:

Այս կապակցությամբ թուրքական մամուլում մեծ աղմուկ է բարձրացել: Բոլորն զբաղված են Նելսոն Մանդելայի վերաբերյալ «փակ որոշման» հանցանքը իրար վրա նետելով:

«Հյուրրիյեթ»-ի Անկարայի թղթակից Քեմալ Տայդամիրի կարծիքով, այս հարցով Նելսոն Մանդելայի վրա բավական ազդեցություն են գործել Եւրոպայի եւ Ամերիկայի հրդեհական լոբբիները:

Բ. Հ. Ա.

## Երբ գոռը գայլը պարում է հայկական երաժշտության տակ

Թուրքիայում մի շարք ծայրահեղական եւ ցեղապաշտ խմբակցություններ ու կազմակերպություններ կան: Այդ խմբակցություններից մեկը կոչվում է «Գորշ գայլ» (Բոզ Քյուրտ), որի ղեկավարն է Ազգային բարորություն կուսակցության նախագահ Ալփարսլան Թյուրքեշը:

Ինչպես ամեն կազմակերպություն, «Գորշ գայլերն» էլ ունեն իրենց խայերգը, որով սկսվում են, խայերգը որքան բառ, այնքան էլ երաժշտություն է:

Վերջերս թուրքական մի թերթում հրապարակ է հանվել «Գորշ գայլերի» խայերգի հեղինակը, որ Սայրաք Նովան է, իսկ եղանակը՝ հայ հանճարեղ աշուղի «Ճեմանչան»:

Թուրքական թերթը 250 տարվա ստեղծագործության խազերի պատճենը որքան փաստաթուղթ տպագրելուց հետո, «Գորշ գայլերի» պատասխանատուին հարցրել է այս անհեթեթության պատճառը: Պատասխանը չի ուշացել. «Սիրեցինք, վերցրինք»:

«Գորշ գայլերը» դեռեւս արդի են միջին Ասիայի տափաստաններից եկած իրենց նախահայրերի բալանցի բնազդով եւ մտայնությամբ:

## Լոսանջելեսյան զոհերի մեջ մի հայուհի

Լոս Անջելեսի խռովությունների ժամանակ իր բնակարանում սպանվել է մի հայուհի Լուսին Մարոնյանը: Հայ անմեղ մոր սպանությունը մեծ հուզում է առաջացրել շրջանի բնակչության մոտ: Այս դեպքի անկանխատեսելի հետեւանքները կանխելու համար մայիսի 2-ին հանդիպում է տեղի ունեցել հայ եւ սեւամորթ պատասխանատուների միջեւ:

Փասադենայի հաղարային խորհրդի անդամ Բիլ Փափարյանի նախաձեռնությամբ կայացած ժողովին մասնակցել են Փասադենայի հաղարապետը, ոստիկանապետը, դատախազը եւ այլ պատասխանատու անձինք: Ներկա էին հայկական կուսակցությունների պատասխանատու անձինք եւ շրջանի սեւամորթ ամերիկացիների ներկայացուցիչները:

Ներկաները դժգոհություն են հայտնել դատաիածը եւ այն որակել որպես անպատասխանատու տարրերի կողմից կատարված ոճրային արարք, որի հեղինակները պետք է դատարան հանձնվեն: Մի շարք գործնական խորհուրդներ են ձեռնարկել գավալի դեպքի հետեւանքները սահմանափակելու համար:

# ԲՈՍՆԻԱ - ՀԵՐՑԵԳՈՎԻՆԱ. Անցյալի ծանր ժառանգությունը

**«Թուրքիան մեր եղբայրն է», այսպես հայտարարեց «Միլլիյեթ» թերթին տված հարցազրույցում Բոսնիայի ու Հերցեգովինայի նախագահ Ալիյա Իզեթբեգովիչը: Եւրոպայի սրտում գտնվող Օսմանյան կայսրության այդ պահակակետի նախկին սպահիների հավատարմության զեղումները չջնջվեցին ոչ ավստրիական օկուպացիայի տարիներին, ոչ Հարավսլավիայի բազավորության օրոք, ոչ էլ Տիտոյի կոմունիստական վարչակարգի կողմից: Սուլթանների սիրված Բոսնիան նայում էր ու նայում է հույսով Ստամբուլի կողմը...**

Նախկին հարավսլավական Բոսնիա ու Հերցեգովինա հանրապետության անկախության ճանաչումը մի երեսույթ է, որը չի տեղավորվում միջազգային իրավունքի ոչ մի շրջանակների մեջ եւ վկայում է միայն սկզբունքների ու չափանիշների այն բազմազանության մասին, որոնցով ղեկավարվում են միջազգային հաղորդակցությունը տնօրինողները: Եթե Սլովենիայի, Խորվաթիայի (չնայած սերբական փոքրամասնության իրավունքների վերաբերյալ չլուծված հարցին) եւ նույնիսկ այսպես կոչված Մակեդոնիայի անկախությունը կարող է բացատրվել ազգերի ինքնորոշման իրավունքով, ապա Բոսնիայի մասին խոսք գնալիս միանգամից հարց է ծագում՝ ո՞ր ազգի:

Հանրապետության ազգային կազմը ծայր աստիճան տարասեռ է եւ փոխվում է ժամանակի ընթացքում: Ըստ Հարավսլավիայի 1981 թ. մարդահամարի, մահմեդականները կազմում են հանրապետության բնակչության հարաբերական մեծամասնությունը՝ 39.52 տոկոս, ուղղափառ սերբերը՝ 32.02 տոկոս, կաթոլիկ խորվաթները՝ 18.38 տոկոս, այսպես կոչված հարավսլավցիները՝ 7.91 տոկոս, մնացած ազգերը՝ 2.13 տոկոս: Անցած տասնամյակում, ինչպես եւ սպասվում էր, մահմեդական բնակչությունն զգալի ած արդեն մինչեւ 45 տոկոս: Մյուս կողմից, սերբերի գերակշռությամբ տարածքները կազմում են հանրապետության մակերեսի 53.3 տոկոսը, մահմեդականներինը՝ 25.81 տոկոսը, խորվաթներինը՝ 16.61 տոկոս:

Այսպիսով, ըստ ազգերից եւ ոչ մեկը չունի բացարձակ մեծամասնություն, եւ միայն կաթոլիկների եւ մահմեդականների դաշինքը բոսնիական անկախության ջատագովներին հնարավորություն տվեց հանրաքվե անցկացնել ու հասնել անհրաժեշտ արդյունքների: Բոսնիայի անկախությունը ազգերի ինքնորոշման արդյունք չէ, այլ նրանցից երկուսի հաղորդական դաշինքը երրորդի (սերբերի) դեմ, որոնք չեն մասնակցել հանրաքվեին: Թերեւս կարելի էր եւ հաշվի չառնել այդ հանգամանքը, սակայն միայն քառուցիկ հայացք նետելով Բոսնիայի էթնիկական քարտեզի վրա, պարզ է դառնում, որ առանց մեծ արյունահեղության այս հարցը չի կարող լուծվել:

Վերադառնանք «ինքնորոշված» ազգերին: Խորվաթ ժողովուրդն ինքնորոշվեց բոլորովին վերջերս, եւ դժվար է ասել, թե որ սկզբունքների համաձայն Արեւմտյան Հերցեգովինան (որ գրեթե ամբողջապես կաթոլիկ է) պետք է ինքնորոշվեր Բոսնիայի ու Հերցեգովինայի, այլ ոչ թե Խորվաթիայի օգտին:

Ինքնորոշված երկրորդ տարրը «մահմեդականներն» են: Տիտոյի ժամանակների Հարավսլավիան եզակի մի երկիր է՝ նոր ազգեր ստեղծելու մոլուցով: Գեներալիսիմուսի գլխագործոցներից մեկը սոցիալիստական արհեստական պետության մեջ ըստ կոռնական պատկանելության ազգի ստեղծումն էր: «Մահմեդականները» օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում իսլամ ընդունած հարավային սլավոնները (սերբեր ու խորվաթներ), խոսում են սերբախորվաթերեն եւ էթնիկական ոչ մի ընդհանրություն չունեն թուրքերի հետ: Սակայն «թուրքացածը թուրքից վատ է» սերբական առածն ունի առարկայական հիմքեր: Ըստ բոլոր բանական սկզբունքների, մահմեդականները պետք է ներկայացնեն ոչ թե ազգային, այլ կրոնական ընդհանրություն: «Մահմեդականների» առաջնորդներից ոմանք առաջարկում էին իրենց վերանվանել «բոսնյակների»: Սակայն այդ առաջարկը համապատասխան արձագանք չգտավ, առավել եւս, որ իբր թե անհետվում էր Բոսնիային սպառնացից եւ Սերբիայի կազմի մեջ մտնող Սանջակի շրջանի մահմեդական բնակչությունը: Այսպիսով, ինքնորոշված ազգերի կարգավիճակը խորվաթների եւ մահմեդականների համար խիստ չափազանցված է:

**Եթե նկատի առնվի միջազգային պրակտիկայում անհամեմատ ավելի հաճախ կիրառվող սպառնալիքների անխախտելիության սկզբունքը, ապա հարցերի ճանկը կավելանա: Նախ, ընդհանուր ջանքերի շնորհիվ ամբողջապես խախտվեց Հարավսլավական պետության ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը: Այնուհետեւ, Բոսնիա ու Հերցեգովինա պետություն, որպես այդպիսին, երբեք գոյություն չի ունեցել 1463 թ. Բոսնիան ու Հերցեգովինայի մեծ մասը նվաճվեցին Մեհմեդ Բ սուլթանի կողմից եւ մինչեւ 1878 թ. մտնում էին Օսմանյան կայսրության կազմի մեջ, հանդիսանալով նրա արեւմտյան սահմանը: Բեռլինի վեհաժողովից հետո Բոսնիան օկուպացվեց, իսկ 1908 թ. բռնակցման ենթարկվեց Ավստրո-Հունգարիայի կողմից: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նրա տարածքն ամբողջովին մտցվեց Ֆաշիստական Անկախ Խորվաթիայի կազմի մեջ: Բոսնիա ու Հերցեգովինա հանրապետության հետպատերազմյան սահմանները հաստատվեցին Տիտոյի անմիջական մասնակցությամբ եւ վերջնականապես ամրագրվեցին 1974 թ., երբ Սոցիալիստական Հարավսլավիայի նոր Սահմանադրության մեջ առաջին անգամ հիշատակվեցին մահմեդականները: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ արդեն այն ժամանակ են դրվել այսօրվա ընդհարումը բորբոքելու բոլոր անհրաժեշտ նախադրյալները: Որպես սահմանազատման հիմք, ընդունվեցին Բոսնիայի ու Հերցեգովինայի պահպանման սկզբունքները օսմանյան կայսրության Բոսնիայի վիլայեթի տարածքում: Այնպիսով, այժմյան անկախ հանրապետության սահմանները հիմնականում համընկնում են թուրքական օկուպացիոն եւ ոչ պակաս դաժան կոմունիստական վարչակարգերի վարչական բաժանման հետ, որոնք հաշվի չէին առնում էթնիկական ու կրոնական տարբերությունները: Իսկ նրանք, որ տասնամյակներ շարունակ բողոքում էին կոմունիստական ահաբեկչության դեմ, այսօր զարմանալի հեշտությամբ ընդունեցին տիտոիզմի ամենաայլանդակ եւ ամենաանմարդկային դրսեւորումներից մեկը: Սակայն զարմանալու կարիք չկա: Հենց այդպիսի Բոսնիան է ամենահարմար փորձադաշտը միջազգային նոր կարգերի տիպարների փորձարկման համար: Սա է հաստատում եւ վերջին հարյուրամյակի Բոսնիայի ու Հերցեգովինայի ամբողջ պատմությունը:**

1875-78 թթ. Արեւելյան ճգնաժամից սկսած սա արդեն չորրորդ անգամն է, ինչ սերբ ժողովուրդը փորձում է միանալ Բոսնիայի ու Հերցեգովինայի իր եղբայրների հետ: Եւ ամեն անգամ դա խախտում է եւրոպական հավասարակշռությունն ու ավարտվում լայնածավալ պատերազմներով: Բանն այն չէ, որ ազատագրումներով: Բանն այն չէ, որ ազատագրումներով: Բանն այն չէ, որ աշխարհն իբր սերբերին տանել չի կարող, այլ այն, որ Բոսնիան ու Հերցեգովինան, գտնվելով Բալկանների կենտրոնում եւ գրաղեցնելով Արեւմուտք-Արեւելք եւ Հյուսիս-Միջերկրական ծովուղիների խաչմերուկում կարեւորագույն ռազմավարական դիրք, չափից ավելի գրավիչ է ազատագրումը: Միջազգային նոր կարգավիճակի տեսաբաններին ձեռնտու չէ համեմատաբար մեծ եւ տնտեսապես զարգացած սերբական պետության գոյությունը զորեղ բանակով, մարտական ազգային բարձր ոգով եւ, բացի այս, ժամանակ առ ժամանակ ռուսական ազդեցության տարածումով: Անհամեմատ շահավետ է այնպիսի մի պետության գոյությունը, որը բույլ է, ծվատված բազմաթիվ ազգային եւ կրոնական բախումներից, բայրայված տնտեսությամբ, չդիմադրող եւ իրեն ավելի բանկ վաճառելու համար գնորդներ որոնող:

Միայն մեկ հանգամանք կարող է լուրջ բարդություններ առաջացնել եւրոպական բաղաքագետների տեսական հաշվարկներում, չէ՞ որ Բոսնիան Թուրքիային նվիրված գերակշռող մեծամասնությամբ մահմեդական բնակչությամբ մի երկիր է, իսկ Եւրոպան իմը Թուրքիային մտցնելով Եւրոպայի կենտրոն, տրամադրում է նրան այդ շրջանում արդյունավետ գործելու բոլոր հնարավորությունները՝ չմտածելով հետեւանքների մասին: Երբ Սուլեյման Դեմիրելը խոսում է Ադրիատիկ ծովից մինչեւ Չինաստան տարածվող Թուրքիայի մասին, որպես այդ նոր օսմանա-թուրանական կայսրության արեւմտյան սահման է հասկացվում հենց Բոսնիան:

Որոշ վերլուծողներ, հաշվի առնելով Բոսնիայի իրադարձությունները, նշում են, թե Բալկաններում Թուրքիայի դերի բարձրացումը ԱՄՆ-ի հետաքրքրության աղյուսակն է ուղղված Եւրոպայի կազմալուծմանը եւ հավիտենական ազգամիջյան ու տարածքային վեճեր բորբոքելուն: Քանի որ Գերմանիայի դիրքերի հզորացումն ու նրա ստրատեգիական մուտքն Ադրիատիկ ծով անկախ Խորվաթիայի ու Սլովենիայի միջոցով դրժվար թե աղագայում գոհացնի ամերիկացիներին, ասպարեզում հայտնվում է Թուրքիան, որին վիճակվելու է ոչ միայն «մեծասերբական», այլեւ «դանգերմանական» ձգտումների զսպողի դերը: Թեեւ այժմ թուրք-գերմանական շահերը Բոսնիայում համընկնում են (ինչն իր արտացոլումն է գտնում խորվաթ-մահմեդական դաշինքի մեջ) Սերբիայի եւ հարավսլավական բանակի չեզոքացման եւ գործող անձանց կազմից նրանց հեռացման հմասով, ապագայում հնարավոր է այդ երկու պետությունների շահերի բախում: Չէ՞ որ նրանցից յուրաքանչյուրը Բոսնիան ու Հերցեգովինան համարում է իր ազդեցության ոլորտը:

Բուռն մարտական գործողությունների հետ մեկտեղ, շարունակվում է նաեւ Բոսնիայի ու Հերցեգովինայի ապագա կառուցվածքին նվիրված միջազգային խորհրդաժողովը: Բոսնիայի սերբերը հանդես են գալիս հանրապետության կոնֆեդերատիվ կառուցվածքի օգտին՝ կանոնակարգ սկզբունքով, ելնելով այս կամ այն շրջանում որեւէ ազգի գերակշռությունից: Խորվաթները կարծում են, թե համատեղ ապրելու ամենաարդյունավետ միջոցը Ֆեդերացիան է: Մահմեդականները պայքարում են միասնական կենտրոնացված պետության համար, որտեղ նրանք ապագայում կարող են բնակչության բացարձակ մեծամասնություն կազմել եւ որոշ ժամանակ անց հռչակել իսլամական հանրապետություն:

Բոսնիայի ու Հերցեգովինայի անկախության ճանաչման եւ միջազգային խորհրդաժողովի ավարտից ՀԱԲ-ի զորամիավորումների դուրսբերման պահանջի մեջ սերբերը տեսնում են իրենց ազգային իրավունքների խախտում եւ ճնշում, որոնց նպատակն է սպիտել իրենց հրաժարվել պահանջներից: Վերջերս նկատվում են նաեւ խորվաթ-մահմեդական դաշինքի փլուզում, խորվաթ-սերբական սեղմարաս հարձակողականության փորձեր: Եթե այն իրականություն դառնա, ապա հարցականի տակ է դրվելու իր ներկայիս տեսքով Բոսնիա ու Հերցեգովինա պետության գոյության իրավական հիմքը:

ԱՇՈՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

## Եւրոպական համայնքի «ավելորդ» անդամը

Դարասկզբին Թուրքիայի համար օգտագործված «հիվանդ մարդը» արտահայտությունն այսօր կոչել է Հունաստանին այն շրջանակում, որի անդամ 12 երկրներից մեկն է նա 1981 թ.-ից: Եւրոպական համայնքի հիմնադիր պայմանագրում կնքված հոմում, չկա որեւէ հոդված, որն արգելի իր որեւէ անդամին: Եւ Հունաստանի գործընկերներից ոմանք այժմ ափսոսում են դրա համար:

Պատճառը Հունաստանին չի հաջողվել բարելավել իր տնտեսական ցուցանիշները: Նրա տարեկան եկամուտը հաշվատած մյուս 11 երկրների հետ 1983-85 թթ. 82 տոկոսից 1988-ին իջել է 72 տոկոսի, իսկ գործազրկության մակարդակը հասել է 8 տոկոսի: Համայնքի հասուկ հանձնախմբի տվյալներով, Հունաստանի ներքին պարտքը 1991 թ. ընդամենը հասել է 14 տոկոսի, իսկ ընդհանուր պարտքը 135-140 տոկոսի: Ընդհակառակը, հանրային մարզի աշխատողների թիվը բարձրացել է 4,4 տոկոսով: Հանձնախմբի կարծիքով, այս տարվա ընթացքում բյուջեի միայն 300 միլիարդ դրաիմ (1,5 միլիարդ դոլար) եւ առաջիկա տարի 500 միլիարդ դրաիմ կրճատումները կարող են փրկել երկրի տնտեսությունը: Սակայն այդպիսի կրճատումը անհավանական է, քանի որ Կոնստանտին Միցոտակիսի պահպանողական կառավարությունը ընտրություններից առաջ խոստացել է ոչ միայն չկրճատել պետական ծախսերը, այլեւ ավելացնել դրանք:

Այս երկու հարցերում Աթենքի «ոչ ճկուն» կեցվածքը խիստ դժգոհություն պատճառեց համայնքի մյուս երկրներին, նմանապես Միցոտակիսի վերջին այցը Բելգրադ, ինչը նկատվեց սերբական հովանավորությամբ նոր Հարավսլավիայի ճանաչման մի ծեւ, որին դեմ են մյուսները: Գիմարաքի հանդիպման մասնակից նախարարներից մեկը դիտել տվեց, որ «նման երկրորդ հանդիպում եւ վերջ աբսուրդի կդառնան Եւրահամայնքի ներսում»:

Հանդիպման ընթացքում Հունաստանը մենակ մնաց: Միայն Գերմանիայի արտգործնախարար Հանս Դիտրիխ Գենշերն էր, որ պատրաստ էր նրան, առարկելով, թե Մակեդոնիայի հարցը Հունաստանի ազգային գերագույն շահերին է վերաբերում, իսկ Թուրքիան ընդհանրապես չհայտնեց տեղի ունեցածի վերաբերյալ իր կարծիքը:

Ընդհանուր առմամբ Հունաստանը դարձյալ մնաց բալկանյան որեւէ երկրի նման: Եւ այժմ, երբ նրա հարեւանները ազատ ընտրություններ են ծեռնարկել, Եւրահամայնքը նվազ հանդուրժող է դարձել այդ երկրների հետ Հունաստանի վեճերի հանդեպ:

Այս հանգամանքն առավել շեշտվեց վերջերս, երբ Եւրահանձնաժողովի Գիմարաասում (Պորտուգալիա) կայացած արտգործնախարարների հանդիպմանը որոշ Միցոտակիսը մի անգամ եւս օգտագործեց իր վետոն, երբ հարց բարձրացավ ճանաչելու Մակեդոնական հանրապետությունը: Հունաստանի ներկայացուցիչը պահանջեց, որ նախկին հարավսլավական այդ հանրապետությունը փոխի իր անունը, քանի որ Հունաստանի հյուսիսային շրջանը նույն անունն է կրում:

## Եւրոպական համայնքի «ավելորդ» անդամը

Դարասկզբին Թուրքիայի համար օգտագործված «հիվանդ մարդը» արտահայտությունն այսօր կոչել է Հունաստանին այն շրջանակում, որի անդամ 12 երկրներից մեկն է նա 1981 թ.-ից: Եւրոպական համայնքի հիմնադիր պայմանագրում կնքված հոդվածում, չկա որեւէ հոդված, որն արգելի իր որեւէ անդամին: Եւ Հունաստանի գործընկերներից ոմանք այժմ ափսոսում են դրա համար:

Պատճառը Հունաստանին չի հաջողվել բարելավել իր տնտեսական ցուցանիշները: Նրա տարեկան եկամուտը հաշվատած մյուս 11 երկրների հետ 1983-85 թթ. 82 տոկոսից 1988-ին իջել է 72 տոկոսի, իսկ գործազրկության մակարդակը հասել է 8 տոկոսի: Համայնքի հատուկ հանձնախմբի տվյալներով, Հունաստանի ներքին պարտքը 1991 թ. ընդամենը հասել է 14 տոկոսի, իսկ ընդհանուր պարտքը 135-140 տոկոսի: Ընդհակառակը, հանրային մարզի աշխատողների թիվը բարձրացել է 4,4 տոկոսով: Հանձնախմբի կարծիքով, այս տարվա ընթացքում բյուջեի միայն 300 միլիարդ դրաիմ (1,5 միլիարդ դոլար) եւ առաջիկա տարի 500 միլիարդ դրաիմ կրճատումները կարող են փրկել երկրի տնտեսությունը: Սակայն այդպիսի կրճատումը անհավանական է, քանի որ Կոնստանտին Միցոտակիսի պահպանողական կառավարությունը ընտրություններից առաջ խոստացել է ոչ միայն չկրճատել պետական ծախսերը, այլեւ ավելացնել դրանք:

Այս երկու հարցերում Աթենքի «ոչ ճկուն» կեցվածքը խիստ դժգոհություն պատճառեց համայնքի մյուս երկրներին, նմանապես Միցոտակիսի վերջին այցը Բելգրադ, ինչը նկատվեց սերբական հովանավորությամբ նոր Հարավսլավիայի ճանաչման մի ծեւ, որին դեմ են մյուսները: Գիմարաասի հանդիպման մասնակից նախարարներից մեկը դիտել տվեց, որ «նման երկրորդ հանդիպում եւ վերջ անբուժելի կդառնան Եւրահամայնքի ներսում»:

Հանդիպման ընթացքում Հունաստանը մենակ մնաց: Միայն Գերմանիայի արտգործնախարար Հանս Դիտրիխ Գենշերն էր, որ պատրաստ էր նրան, առարկելով, թե Մակեդոնիայի հարցը Հունաստանի ազգային գերագույն շահերին է վերաբերում, իսկ Թուրքիան ընդհանրապես չհայտնեց տեղի ունեցածի վերաբերյալ իր կարծիքը:

## Երկու դար հետո Սահմանադրության բարեփոխումը

Ջեյմս Մեդիսոնը. Միացյալ Նահանգների հիմնադիր հայրերից մեկը ու նաեւ ամերիկացու հաղորդագիական եւ մարդու իրավունքների վերաբերյալ Սահմանադրության 10 առաջին բարեփոխումների գլխավոր ճարտարապետը, 203 տարի առաջ, 1789-ին, առաջարկել էր բարեփոխություն, որ ցարդ չի վավերացված: Օրինագիծը վերաբերում է Սահմանադիր ժողովներին, որոնց անդամները իրավունք չունեին իրենց բոլոկների հավելումը վերահսկել իրենց պատգամավորության շրջանում: Հավելումից պետք է օգտվեին նոր ընտրություններով ընտրվողները կամ վերընտրվողները: Մայիսի 7-ին Միչիգան

digitised by A.R.A.R.@